Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալովի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.
Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція "Ардзаганкъ". Իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang"
Յայտարարութիւններ ընդունվում՝ են հայերէն եւ օտար լեզուներով։

ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԻ բարեհաճ կարգադրութեամբ քառասնօրեայ օրհնութիւնը կատարվում հանգուցեալ արեգայ Գրիգորիոս Ղամազեանցը՝ ամսոյս 13-ին, կիրակի, Վերափոխման տօնի օրը պէտք է մատուցանել անդրանիկ ս. պատարագ Աւետեաց Չղղաշէնոս ս. Աստուածածնայ եկեղեցում (ուր յիշեալ արեգան 15 տարի անընդհատ կատարել է աւագ սարկաւագի պաշտօն)։ Ուստի սրբազան պարտք եմ համարում յայտնել ի գիտութիւն մեր եկեղեցւոյ բարեպաշտ ծխականներին և ժամաւորներին՝ բարեհաճել շնորհ բերել ս. պատարագին։ Պատարագն սկսվելու է ճիշտ 10 ժամին։
(2—2) Աւետեաց եկեղեցւոյ՝ Սարգիս աւագ քահ. Աղաջանեանց։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ
Գլադստոնի ճառը։
Ռօզբերին և գաղտնական ճառը։
Հայկական դատի լուծման նոր ծրագիր։
Ծովային ցոյց։
Հայկական կոմիսիա։
Ընդհանուր յայտագիր։
Ցասման միտինգ Բուլղարիայում։
Սօլզբերին և հայկական խնդիր։
Օսմանեան կառավարութիւնը և Եւրոպան։
Թիւրքիան և հայկական դատը։
Ֆրանսիա և հայկական խնդիր։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հայրենիքից մի նամակ։ Ներսիսեան դպրոցի տեսչի հաստատութիւնը։ Գ. կառավարչապետի ժամանումը։ Բոսֆորայի էմիրի մեկնումը Վլադիկավկազից։ Երկաթուղի Չաքվիսի վրայով։ Ռուսաց աշխ. ընկերութեան գոյութեան յիսնամեակը։ Երևանայ նահանգի և Կարսի շրջանի ագահանքերը։ Գանձակի նահանգի պղնձի հանքերը։ Տաճկահայքի վերաբերեալ մի նոր գիրք։ Օր. Բակշեվիչ։ Նամակ խմբագրութեան։ Խոլերան Ռուսաստանի Վոլինի նահանգում։
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Սամսոնից։ Բաբերդից։
ՖԻԼԻԵՏՕՆ. — Սասնոյ իշխան Թոռնիկը։
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱՆ — Հայկական եկեղեցու սկզբնաւորութիւնը։
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԳԼԱԴՍՏՈՆԻ ՃԱՌԸ

(«Daily News» օգ. 7 առաջնորդողը)։

Գլադստոնի ճառը, որ երէկ երեկոյեան արտասանուեց Չեստէրում, ամբողջ աշխարհում կկարդացուի. Նա կընդունուի իբրև մի ամենահեղինակաւոր խօսք, որպէս միայն կարող է արտայայտել մեր երկրի ձայնը։

«Կոտորած, սպանութիւն, բռնութիւն և տանջանք», դա է, ինչպէս Գլադստոնը ասաց, Թիւրք կառավարութեան Հայաստանում կազմակերպած դրութիւնը։ Դրանք անհատական, բացառիկ երևոյթներ չեն, այլ Թիւրք պետութեան վարչական սիստեմի արդիւնք. և սուլթանն ինքը անձամբ վարձատրում է ամենաճարպիկ հրէշներին, որոնց ձեռքով այդպիսի ոճրագործութիւններ են կատարուել։

Գլադստոնը պնդում է, և այդ առաջին անգամը չէ, թէ անկարելի է սուլթանի խոստումներին ուշ դարձնել։ Նա խոստանում է ծաղրելու համար, նա խոստանում է, որ այդ խոստումները խախտի, չկատարի։ Միստր Գլադստոնը՝ ինչպէս ինքը յիշեց իր ունկնդիրների առաջև, 18 միլիոն տղամարդկանց և կանանց ազատութիւնն է տեսել սուլթանի դժոխային տիրապետութիւնից։ Այս խնդիրը, ինչպէս Գլադստոնն ասաց, պէտք է կուսակցութիւններից դուրս լինի։ Այդ խնդիրը շաղկապում է այնպիսի մարդկանց, որպիսիք են Գլադստոնն ու Վեստմինստրի դուքսը, մարդիկ, որոնք ուրիշ խնդիրներում չեն հաշտւում, որովհետև այս խնդիրը մարդասիրութեան և արդարութեան է վերաբերում։

Մենք գործ ունենք, Եւրոպան գործ ունի «երկրիս երեսի ամենավատթար կառավարութեան հետ»։ Մենք պէտք է առանձնացնենք մահմեդականների հալածանքները, որոնք քրիստոնէից դէմ են կատարւում։ Բայց այդ չէ խնդրի էութիւնը։ Այդ նրա պատահական կողմն է։ Ինչպէս ասում է Գլադստոնը, եթէ կրկնի դրութիւնը հակառակը լինէր, եթէ քրիստոնեաները հալածէին մահմեդականներին, «մեր զայրոյթը նոյնը պէտք է լինէր»։ Որոշումը, որ առաջարկեց Գլադստոնը և որ՝ ի հարկէ, միաձայն ընդունուեցաւ, կառավարութեան աջակցութիւն է առաջարկում, որ ստիպէ ընդունել տալ հայկական ռեֆորմները։ Միևնոյն ժամանակ անհամապատասխան է համարում և պախարակում է ամեն մի ռեֆորմ, որ եւրոպական պետութեանց մշտական վերահսկողութեան տակը չի դրուելու։ Այդ ճշմարիտ է։ Սուլթանի խոստումները դրեթէ նոյնքան արժէք ունին, որքան չարամտութեամբ մտածուած մարդու ստորագրութիւնը։ Մի քանի ամիս սրանից առաջ Կ. Պօլսի փաշաները համաձայնեցան քիւրդերին զինաթափ անել։ Ցաւօք սրտի, այդ սպանութեանց և վիրաւորանքների գործում ամենանշանաւոր տեղը քիւրդերը չեն բռնում։ Քիւրդերից խլուած զէնքերը նրանցից աւելի կատաղի քիւրդերին յանձնուեցան։ Մենք անցեալ քննութեան գործը չպէտք է լաւ կազմակերպենք, այլ աւելի ուշ պիտի դարձնենք, որ այդ անասելի արհաւիրքների կրկնութիւնը անհնարին դառնայ։

Այդ արհաւիրքները՝ ինչպէս Գլադստոնն ասաց, կրկնւում են ամեն ամիս, ամեն շաբաթ, ամեն օր Հայաստանի զանազան կողմերում։

Գլադստոնը տեսել է Բոմբի ժամանակուայ Նեապոլի բանտերը. բայց դրանք ոչինչ են Բիթլիսի բանտերի համեմատութեամբ։

«Չափազանցելը, եթէ նոյն իսկ մենք տրամադիր լինէինք չափազանցելու, ներկայ դէպքում մեր ոյժից վեր է»։ Այսպէս է ասում Գլադստոնը, և ինչ որ նա ասում է, ճշմարիտ է։

1878 թ. Թիւրքաց հերքումները Բուլղարական կոտորածների մասին՝ յաճախ էին և սովորական։ Բուլղարիայի սարսափները պաշտօնապէս հերքում էր հանգուցեալ Մուզուրուս փաշան, որ Լոնդոնի տաճկական դեսպանն էր, և գործում էր իր կառավարութեան հրահանգների համաձայն։

Միստր Դիզրայէլին համայնքների պալատում ասաց, թէ Թիւրքերը վճռական մեթօդի են հետևում միայն այն ժամանակ, երբ իրանց գահերի հետ գործ ունին։ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսիայի ներկայացուցիչների տուած ցուցմունքները հաստատում են այն ամենը, որ եղել են այս սիւնակներում։ Հայկական խնդիրն աւելի լուրջ վերաբերմունք է պահանջում, քան Բուլղարականը։ Չարագործութիւնները անհամեմատ բազմաթիւ են, և չարագործները՝ աւելի վատթար։

Միստր Գլադստոնը աւելի նշանակութիւն է տալիս ամերիկացի վկաների ցուցմունքներին, որոնք նման են դօք. Դիլլօնի հաղորդածներին. սա իր աչքով տեսածի և ականջով լսածի կատարեալ տեղեկագիրն է տպագրել «Contemporary Review» հանդէսի օգոստոսի համարում։ Միացեալ-Նահանգները անկողմնակալ են։ Թիւրքիայի սահմանների կրճատումից և Ռուսիայի ընդարձակումից նրանք ոչ շահ և ոչ վնաս ունին։ Միստր Գլադստոնը առանց տատանուելու Կ. Պօլսի կառավարութեանը մասնակից է համարում Սասունի սարսափներին և այն կոտորածներին, որոնք մինչև այժմ շարունակվում են. և մեղադրում է նրան։ Ահա ինչն է, որ անօգուտ է դարձնում Դրան հետ բանակցութիւններ շարունակելը։ Դուռը չէ կարող դադարեցնել այն, ինչ որ հովանաւորվում է սուլթանի կողմից։ 1877 թ. Գլադստոնը նկարագրեց բուլղարներին, որոնք «հազիւ վստահանում էին իրանց աչքը դէպի վեր բարձրացնել, նոյն իսկ դէպի իրանց երկնաւոր Հայրը»։ Հայերն այժմ նոյնպէս մոռացուած են։ Նրանց տանջելով կը կոտորեն, եթէ նրանք բողոքեն։ Ներկայ ժամանակում Թիւրք կառավարութեան նման ոչինչ չկայ։ Ահա ինչու համար սովորական մարդիկ, որոնք հարկ են տալիս Թագուհուն, Հայաստանի մասին պատմուածներին հաւատ չեն ընծայում։ Եթէ այդ պատմածները մի այլ կառավարութեան վերաբերէին, ճիշտ չէին լինի։ Բայց Թիւրք սուլթանների նկատմամբ ամեն ինչ հաւանական է, անհաւանական է միայն ազնւութիւնը։ Նա կանանց և մանուկների հետ այնպէս է վարւում, ինչպէս ուրիշը չէր վարուիլ տղամարդկանց հետ, և այդ նորա պետի հաւանութեանն է արժանանում։

Եթէ Թիւրքիայի վրայ ճնշումն պիտի գործ դնուի, որ անպատճառ պէտք է լինի, այդ կը լինի Բեռլինի դաշնագրին ստորագրող վեց մեծ պետութեանց համաձայնութեամբ։ Նրանց պատասխանը հազիւ կարող է կասկածի տակ ընկնել։ Ինչպէս էլ լինին նրանց անձնական շահերը, նրանք չեն կարող տանել այն տանջանքները և սիստեմատիքական կոտորածները, որոնց մասնակից են կանայք և տղամարդիկ, որոնց միակ յանցանքը քրիստոնէական կրօն դաւանելն է։

ՌՕԶԲԵՐԻՆ և ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՌԸ

Օգոստոսի 3-ին նախկին նախարարապետ լորդ Ռօզբերին լորդերի պալատում մի ճառ խօսեց, որով բացատրութիւններ պահանջեց Հայկական և Չինական խնդիրների մասին։ Ի միջի այլոց նա հարցնում էր, թէ որքան հաւատարիմ են այն լուրերը, երբ թէ Ֆրանսիան և Ռուսիան չեն կամենում Հայկական խնդրում Մեծ Բրիտանիայի հետ միասին գործել։

Լորդ Սօլզբերին պատասխանելով դրան, յայտնեց, թէ Հայկական խնդրի նկատմամբ երեք պետութեանց հայեացքների մէջ կատարեալ համերաշխութիւն է տիրում։

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Հայկական խնդրի նկատմամբ լորդերի պալատում Սօլզբերիի բացատրութեանց մասին Լոնդոնից հեռագրում են «Berliner Tageblatt» թերթին, թէ Լոնդոնի դիպլոմատիքական շրջաններում հայկական խնդրի մասին վճռական քայլերի են սպասում։ Կարծւում է, թէ հայկական ռեֆորմների ներմուծման ընդհանուր վերահսկողութիւնը կյանձնուի Մեծ Բրիտանիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի դեսպաններին։ Այս երեք դեսպանները առանձին մարմինների միջոցով կհսկեն ռեֆորմների ներմուծման գործի վրայ։ Տակաւին յայտնի չէ, թէ Դուռը ինչպէս կը վերաբերուի դէպի այդ ծրագիրը։ Հայկական խնդրի մասին Սօլզբերիի ճառի կտրուկ ոճը սուլթանին զգուշացնելու նշան է համարւում։

Գերմանական լրագրները առանց վրդովման չեն վերաբերւում այդ ծրագրին, ըստ որում խնդրի այդօրինակ լուծումը դուրսն է թողնում եռապետական դաշնակցութիւնը և սուլթանին երեք պետութեանն է ենթարկում։

ԾՈՎԱՅԻՆ ՑՈՅՑ

«Նովոյէ Օբոզրենիէ» լրագրին հեռագրում են Պետերբուրգից.

«Նովոստի» լրագրին Լոնդոնից հեռագրում են, թէ անգլիական կառավարութիւնը պատրաստւում է Թիւրքիայի դէմ ծովային ցոյց անել։ Ենթադրում են՝ որ Դուռը ցոյցի առաջը կառնէ վաղօրօք զիջումներ անելով հայոց խնդրում։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՍԻԱ

Ռէյտէրի հեռ. Կ. Պօլսից 12 օգոստ.

Միստր Շիպլէյը, Քննիչ Կոմիսիայի բրիտանական պատգամաւորը, ռուսաց կոմիսար պ. Պրժեվալսկու ուղեկցութեամբ ամսոյս 14-ին Երզրումից Կ. Պօլիս կուղևորուին, ուր ժամանելու է 25-ին։ Ֆրանսիական պատգամաւոր պ. Վիլբէրը, որ տկարութեան պատճառով ստիպուած էր Մուշից օր առաջ մեկնել, հասնելու է այստեղ այսօր։

Կոմիսիայի անդամները կը բերեն իրենց հետ քննութեան հաշիւը։

Մեծ-Բրիտանիայի փոխ-հիւպատոս միստր Համպսօնը այցելում է այժմ Տալւորիկի գիւղերը կոտորածներին դրամական նպաստ է բաժանում։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՅՏԱԳԻՐ

«Ռէյտէրի գործակալութիւնը» հեռագրում է Կ. Պօլսից, որ օգոստոսի 13-ին Մեծ-Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանատանց դրագոմանները ներկայացրին Դրանը՝ մի ընդհանուր յայտագիր (նոտա) Հայաստանում հաստատուելիք անհրաժեշտ ռեֆորմների նկատմամբ։

ՑԱՍՄԱՆ ՄԻՏԻՆԳ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Մեզ գրում են Սլիվէնից օգոստոսի 2 թւով.

«Որքան որ «Արձագանքի» մէջ տպագրուած պ. Դիլլօնի Բաղէշէ տուած հեռագիրը սրտախայթոյց մեզ Դրան ռեֆորմները ընդունելու հարցի մասին, աւելի այնքան ի խոր տրտմութեան և յուսահատութեան ենթարկեց սուլթանի այլ և Դրան մերժումը՝ նոյն ռեֆորմների մասին։ Մենք կարծեցինք որ վերջապէս Դուռը ընկճուեց երեք քրիստոնեայ հզօր պետութեանց առաջարկութեան առաջ և պակից դարաւոր տառապեալ հայերու միակ խիղճ. սակայն անհուն սխալուած ենք եղեր։ Տաճիկը անուղղելի ազգ մ՝ է, ինչպէս շատ անգամ բաւած և խոստովանած են եւրոպական պետութիւնները։

Տեղւոյս անհար ազգայինք, այդ ներշնչեալ տրտմութեան ազդեցութեան ներքոյ, անմիջապէս միթինգ մը կազմեցին, որ մէջ յայտնելով իրենց անհուն ցաւումն դէպի Դրան այդ վիրաւորական ձգձգումները, երգեցին իրանց ձայնը եւ միացնել ընդհանուր Եւրոպայի ու ճնշեալ հայ եղբարց ձայնի հետ։ Միթինգի արդիւնքը յղեցին Կ. Պօլսի Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր և աղաչեցին, Նորին Ամենապատուութիւն, որ հաճի իրանց միթինգի արդիւնքը ներկայացնել երեք մեծ պետութեանց ներկայացուցիչներին։

Մակեդոնիայի յուզումները դեռ կը շարունակուին. Թիւրք իշխանութեան լրտեսներն այժմ տեղային գեղերում կը շրջին, որ ազատ կարենան ի յեղափոխութեան բուն հեղինակները ձերբակալել տալ»։

ՍՕԼԶԲԵՐԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

«Ռուսաց հեռագրական գործակալութիւնը» մեզ հաղորդել էր, թէ մարքիզ Սօլզբերին լորդերի պալատում յայտնել է, որ հայոց խնդրում նոր նախարարութիւնը լորդ Ռօզբերիի քաղաքականութեան է հետևելու եւ միայն այդքան էր հաղորդել. երևի ընդունելով, թէ Թիֆլիզի թերթերի և դրանց ընթերցողների համար հայկական խնդրին վերաբերեալ մանրամասնութիւնները կարևոր չեն։ Այժմ հարկաւոր ենք համարում մայրաքաղաքի թերթերից քաղել նոյն գործակալութեան հաղորդած տեղեկութիւնները։

Հայաստանի նկատմամբ նոր կաբինետը նախորդ կառավարութեան քաղաքականութեանն է հետևելու։ Դուռը խոստացել է, որ ռեֆորմները կիրագործուեն, թէև դրա համար հարկաւոր երաշխաւորութիւնները չի ներկայացրել։ Ռուսիան և Ֆրանսիան հաւատացրել են, թէ իրանք եռանդով պիտի պաշտպանեն անգլիական կառավարութեան գործողութիւնը։ Անգլիայից աւելի անկեղծ կերպով ոչ ոք չի ցանկանում, որ Օսմանեան պետութիւնը պահպանէ իր կատարեալ անկախութիւնը։ Սուլթանը շատ կսխալուի, եթէ՝ իսկ ձեռնոյն կերպով միայն իւր վարկը պահպանելու և իւր իրաւունքների դէմ կարծեցեալ ոտնահարութիւններին դիմադրելու համար՝ հրաժարուի եւրոպական պետութեանց օգնութիւնից և խորհուրդներից։ Այդ պետութիւնները ցանկանում են վերացնել անիշխանութիւնն ու բռնութիւնը, որոնք ժամանակին՝ չնայած դաշնագրերին ու պետութեանց համակրանքներին, կարող են կործանիչ լինել սուլթանի իշխանութեան համար։

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ և ԵՒՐՈՊԱՆ

(«Daily News»-ի օգոստ. 12 առաջնորդողը)։

Կ. Պօլսի մեր թղթակցի հեռագիրը, որ տպագրուած է այսօր մեր լրագրում, ցոյց է տալիս, թէ որքան անհրաժեշտ էր Չեստէրի միտինգը։

Դեսպանները բաւարար չեն համարում հայկական ռեֆորմների ծրագրի վերաբերեալ Դրան բացատրութիւնները. և հիմք չկայ ենթադրելու, թէ դեսպանները շատ բան պահանջեն։ Նրանց չէ առաջնորդում այն սկեպտութիւնը, այն վրդովմունքը, որ առաջ բերին Սասունի կոտորածները նոյն իսկ այնպիսի մարդկանց, որոնք մանրամասնաբար չեն հետևում արևելեան գործերին։ Ցիրաւի, ինչպէս նկատում է մեր թղթակիցը, դեսպանները չեն հիմնւում խղճմտութեան առանձին դէպքերի վրայ, այլ աւելի մեծ նշանակութիւն են տալիս այն չարիքներին, որոնք կատարուել են Հայաստանում վերջին հինգ տարուայ ընթացքում։ Զարմանալի չէ, որ բրիտանական դեսպանի հայեացքները նոյնն են, ինչ որ արտայայտել է միստր Գլադստոնը մի Թիւրքի ուղղուած նամակում։ Միստր Գլադստոնը Թիւրքերին չի ատում. Թիւրքիայի համար նա աւելի լաւ բարեկամ է, քան սուլթանն ու իր խորհրդականները։ Հէնց այդ պատճառով նա խորհուրդ է տալիս, որ տեղական կառավարութիւններին խնդրոյ իշխանութիւն շնորհուի։ Եթէ այդպիսի ինքնավարութիւն վաղ շնորհուած լինէր, այժմ Թիւրքիան կարող կլինէր իւր ձեռքի տակ պահպանել այն 18 միլիոնից կազմուած ժողովուրդը, որ կորցրեց։

Այս կէտում ամենայն հաւանականութեամբ, Գլադստոնի հետ համաձայն են լորդ Սօլզբերին և Փիլիպ Կերրին։

Օսմանեան պետութեան աստիճանաբար քայքայումը կարելի է միայն կանգնեցնել այնպիսի ռեֆորմների անյապաղ ընդունելութեամբ, որոնք ապահովէին քրիստոնեաների կեանքն ու սեփականութիւնը։ Երբ սուլթանը կտեսնի, որ անգլիական ազգի բոլոր մասերը միացած են, երբ կիմանայ, թէ՝ ինչպէս մեր թղթակիցը գրում է, Ֆրանսիայի և Ռուսիայի համաձայնութիւնը մեզնից անբաժան է մնում, և երբ կլսի, որ ամերիկական մարտանաւը եկել է նրա ասիական երկիրների մի ուրիշ մասում արդարութիւնը պահպանելու, այն ժամանակ թերևս աւելի լաւ հասկանայ սպառնացող վտանգը։

ՖՐԱՆՍԻԱ և ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ֆրանսիան և Հայկական խնդիրը։

Մենք չենք խօսում այն Ֆրանսիայի մասին, որ յաճախ զէնքը ձեռին, և հանապազ հոգով ու սրտով արձագանք էր տալիս ամեն մի մարդասիրական գործի հրաւէրին։

Ոչ այն Ֆրանսիան, որի արիասիրտ որդիքը արիւն են թափել օտար երկիրներում հայրենիքի ազատութեան գաղափարի համար։

Ոչ այն Ֆրանսիան, որ իր որդիներին սիրով ուղարկում է ամեն տեղ, ուր արդարութիւնը խախտւում էր, ուր Գողգոթայ էր բարձրանում։

Ոչ այն Ֆրանսիան, որ գաղափարի եղբայրութիւնն էր քարոզում, որ ազատութեան, եղբայրութեան և մարդասիրութեան իղէալներով էր ոգևորում մարդկութեանը։

Մենք չենք խօսում այն Ֆրանսիայի մասին, որ արժանացել էր «soldat de Dieu» անունը։

Մենք խօսում ենք այսօրուայ Ֆրանսիայի մասին, որ արհամարհելով Տաճիկ-Հայաստանը տեսնելով, արտասուքի մի կաթիլ էլ չթափեց իր աչքերից, որ Սասնոյ սարսափներին վրայ՝ ցաւակցութեան մի ձայն անգամ չհանեց իր կրծքից, որ կարծես խուլ է մնում թուրքական բռնութեանց առջև, որ բազմաթիւ քրիստոնեաներից թափած արիւնը

գիշերային ցող է համարում, և տանջուածների, ցցի հանուածների, բռնաբարուածների օրհասական աղաղակը՝ առաւօտեան մեղեդի։

Ամիսներ առաջ Ֆրանսիայի աւանդական խիղճերին հաւատարիմ մնացած մի կին իր ազնիւ ձայնը բարձրացրեց և ասաց ֆրանսիացիներին.

«Մարթուած են ձեզ նման հազարաւոր մարդիկ՝ անզգամօրէն, փառօքէն մարթուած, որովհետև քրիստոնեայ էին. և դրանք նահատակներ են, որոնց լիկանքը նախատինք է բերում մարդկութեան պատուին ու իրաւունքներին»։

Ֆրանսիան այդ քնքուշ ձայնին պատասխանեց՝ մտանանչ լինելով Սուլթանի Բարձրագոյն իրաւունքի վրայ։

Նա տեսաւ հոգեվարք մարդկանց հեծութիւնը, պաղատանքը, աղաչանքը, լացն ու արտասուքը և բնեց նստեց և եղեռնական ադդայնութեամբ։

Նրա աչքի առջև պատկերացաւ կատարածի արհաւիրքը, և նա խաղաղ սրտով իր առօրէական դրամանքին անձնատուր եղաւ։

Եւ այժմ, երբ քաղաքական ասպարէզից հեռացած Մեծ Ծերունին այլ ևս չկարողացաւ տանել մարդկութեան կրած վիրաւորանքը, երբ նա ամբողջ աշխարհի առջև ի դիմաց քաղաքակիրթ աշխարհի իր զայրոյթն է յայտնում սոսկալի կատարածութեանը, իր ազդու ձայնն է բարձրացնում ի պաշտպանութիւն թոյլերի և հալածուածների, ֆրանսիական մամուլը չափազանցութիւն է համարում Մեծ Ծերունու վարմունքը։

Այսպէս «Soleil» լրագիրը յանդիմանում է հարցնելով.

«Արդեօք Գլադստոնը չի անցնում խոհեմութեան սահմանը։

Եւ ապա հիմնուելով Խմբիլէանների տուած տեղեկութեանց վրայ, լրագիրը գտնում է, որ անհնարին է Գլադստոնի արտայայտած մտքերը իրագործել Հայաստանում։

«Soleil»-ը զարմանում է, ինչպէս կարելի է պահանջել, որ Թիւրքիան հրաժարուի իր միապետական իրաւունքներից։

Մի քայլ ևս, և ֆրանսիական մամուլն արդար բարկութեամբ կը բացականչի. «Ինչպէս կարելի է պահանջել, որ Թիւրքիան ձեռք քաշի իր աւանդական քաղաքականութիւնից, խեղդի իր վայրենի, գազանական բնազդները, մոռանայ Իսլամի սրբազան պատուէրները ու չկոտորի...»

Այո, մի քայլ միայն, և ֆրանսիական մամուլն այդպիսի բացականչութիւններով կը լցնի այն օդը, որ շնչել է Օրլէանի կոյսը։

Երկրպագութիւն է տալիս Ֆրանսիան և այն էլ Դալայ-Լամային։

Իրաւունք չունէ՞ր արդեօք տիկին Սեվրինը մի քանի ամիս առաջ այսօրուայ ֆրանսիացիներին ասելու.

«Ձեր հոգու մէջ էլ ոչ մի սրբութիւն չկայ. երկինքը փակ է ձեզ համար»։

—

ԹՈՒՐՔԻԱՆ և ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

«Politsche Corespondens» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է. «Թիւրք կառավարութիւնը հայկական խնդրին վերաբերեալ իր պատասխան յայտագրի բացատրութիւնները տալով Ռուսիային, Անգլիային և Ֆրանսիային, ցանկացել է խոյս տալ հաւատարիմ մարդու միջոցով իմանալ, թէ բացատրութիւնները ինչ տպաւորութիւն են թողնում դեսպանների վրայ։ Յայտնըւում է, որ տպաւորութիւնը շատ աննպաստ է եղել։ Այդ բացատրութիւնների առանձին խոստումն է վերաբերեալ Ռուսաց դեսպանը. սա յայտնել է, թէ այդպիսի բացատրութիւնների անկարող են ընդունուիլ։ Թիւրքիայի առաջարկութեանց այդ անյաջողութիւնից առաջ էլ են Թիւրք պաշտօնական շրջաններ։ Նրանք, որպէս և Դուռը կարծում էին, թէ պետութիւնների շատ զիջումներ են անում։ Այդ անյաջողութիւնը սակայն Թիւրքիայի գործունէութեան եղանակի մէջ ոչինչ փոփոխութիւն չէ առաջ բերել։

Իսկ «Koelnische Zeitung» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաւատացնում է, թէ Դրան բացատրութիւնները առանձնապէս վատ տպաւորութիւն են թողել բրիտանական դեսպանի վրայ։ Սէր Ֆ. Կերրին միւս դեսպաններից աւելի սաստիկ կերպով պնդում է, որ Թիւրքիան իրական երաշխաւորութիւններ տայ իր խոստմանցը՝ պետութիւնների պահանջած ռէֆորմների իրագործելու։

Բրիտանական դեսպանի այդ սաստկութեան են պատճառ, որ այժմ մի կողմից Ռուսիայի ու Ֆրանսիայի և միւս կողմից Անգլիայի դեսպանների միջև չկայ այն կատարեալ համերաշխութիւնը, որ գոյութիւն ունէր առաջ։

Լրագիրն աւելացնում է, թէ միակ պետութիւնը, որ Թիւրքիային վտանգ է սպառնում, Անգլիան է։ Այդ նպատակով բրիտանական ուժեղ մարտանաւեր հեռացել Եգիպտոսից դէպի հիւսիս է գալիս և այժմ Բօղազի մօտն է գտնւում, որ Զմիւռնիայից մի օրուայ ճանապարհով հեռի է։

«Temps» լրագրի թղթակիցը հաղորդում է, թէ վերջին ժամանակներս երեք պետութեանց դեսպանների միջև մտերմի և կարծիքների եռանդուն փոխանակութիւններ են տեղի ունենում Դրան վերջին պատասխանի առթիւ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՄԻ ՆԱՄԱԿ

Տաճկա-Հայաստանից ստացած տեղեկութիւններին նայելով այդ երկիրը ամայանալու վրայ է։ Անարգ փարչութեանը սկսել է արդէն դաշնակցել և բնութեան պատուհասը՝ սովը. մի հանգամանք, որ Եւրոպան այսօր խոստովանում է իր միսիոնէրների բերանով, որոնք այժմ Հայաստանի խորքում, ուր կատարուեցան վերջին սարսափները, գործում են ջանալով մասամբ ամոքել նոցա անհուն ցաւերը։

Այն, ինչ որ մինչև այսօր պակաս թողեց քիւրդի սուրը, աննկարագրելի բռնութիւնը, անարգել պանդխտութիւնն ու գաղթը, պիտի կատարեն սովն ու ժանտախտը։

Չարիք ի վերայ չարեաց—այս է կարծես այժմ Տաճկա-Հայոց ճակատագրի անողոք դատավճիռը...

Այսօր, երբ երկրագործ դասակարգի կենսական եղանակն է, նորա գոյութեան փառ զարուն է, այսօր, երբ իւրաքանչիւր չքաւորը, անանկը կարող է լիանալ, յագենալ, այսօր, այս հունձի ամենախիստ ժամանակին, այն, երբ նա խոտով, բանջարեղէններով կը կերակրուի, կը ստիպուի գոյութիւնը պահպանել, ինչ պիտի անէ, կրկնում ենք, ձմեռուայ ժամանակ, երբ այլ ևս սար ու ձոր, դաշտ ու ճանապարհներ փակվում են ձեան թանձր շերտերով, սառնամանի բուքերով։

Արդարև դժնի և տագնապալի է նոցա վիճակը, եթէ շուտափոյթ մի կարգադրութիւն չլինի, մի գործնական միջոց չխորհուի։

Եւ Տաճկա-Հայ եղբայրների այս դառնութիւնը, աւելի փայլում է Տաճկա-Հայաստանի մի ականաւոր հոգևորականից ստացած նամակի հետևեալ տողերի մէջ, որ առաջ ենք բերում բառ առ բառ այստեղ՝ իբրև մի հեղինակաւոր անձնաւորութեան գրուած, այնտեղ կատարած իրերի լուսաբանութեան համար։

«Անշուշտ գիտեմ որ մեր Հայրենեաց խաբբիկներէն կուզէք, որ ձեզ հաղորդեմ։ Գիտեմ որ դուք այդր էք, իսկ ձեր սիրտը՝ ի Հայրենիսն է։ Այն է ձեր խորագը, ինչպէս և պէտք է լինի ամենուս ալ երազը։ Սակայն... ես այժմ ներողամիտ եղէք, որ պիտի չկրնամ գոհացնել զձեզ։ Տակաւին վստահ չեմ, որ մեր նամակներն անկորուստ պիտի հասնեն ձեզ. Երբ այդ մասին ապահովուեմ, յայնժամ, ըստ կարելւոյն, պիտի ջանամ լցուցանել ձեր բաղձանքը։

Ես այժմ գէթ կրնամ ըսել, թէ մեր Հայրենիքը, ինչպէս և նորա շրջակայ գաւառները, ողորմելի վիճակի մը մէջ են։ Անկարգութիւնք, անկանոնութիւնք, հարստահարութիւնք, ըստ առաջնոյն, և բան մ՚ալ դեռ աւել, կը շարունակուին։ Աւելացնենք ասոնց վրայ նաև օր ըստ օրէ մօտեցող սովի սպառնալիք. մահ տարաժամ և բնութեան միւս պատահարներ, ահա ամեն բան արդէն կատարեալ կը գտնէք։

Մեր դժբաղդ և տառապեալ Ազգայինք, որ այսօր ասոր անոր հասած լուրերով յուսահատած կ՚անկեալէին վայելել գէթ անդորրութիւն մը, և ապահովութիւն գտնել, այժմ անոնք ալ կարծես ի չիք դարձան, այժմ գրեթէ ընդհանրութիւն ծայրայեղ յուսահատ վիճակի մը մէջ կը գտնուի։

Մեր վանքերը, գլխաւորապէս ս. Կարապետը, կատարեալ աւերակ մը դարձած է։ Ի՞նչ գրեմ «զի խցուած են Սիօնի ճանապարհք և լռած են Տօնք տարեկանաց. և հովիւք ոմանք փոխարինեալ ի գայլ՝ սկսած են պատառել զոչխարս հօտին իւրեանց, այլ ի վերայ այսր ամենայնի եւ Տեառն ակնկալայց, ապաւինեցից Փրկչին իմոյ և լուիցէ ինձ Տէր...»։

***

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարեհաճել է հաստատել բնական գիտութեանց կանդիդատ պ. *Սամուէլ Բաղդասարեանցին*—տեսուչ Ներսիսեան ազգային հոգևոր դպրանոցի։

***

Այսօր, օգոստոսի 13-ին, ժամանելու է Թիֆլիս Կովկասի գլխաւորհրամանատար գեներալ-ադիւտանտ Շերեմետևը։

***

Վաղը, օգոստոսի 14-ին Բուխարայի էմիրը իր 28 անձնիններից բաղկացած շքախմբով ուղևորուելու է Վլադիկավկազից դէպի Թիֆլիս, ուր մի քանի ժամանակ կը մնայ քաղաքիս հանրային բաղանիքներից օգտուելու համար։

***

Թագաւոր Կայսրը յուլիսի 28-ին Բարձրագոյն հրամայել է հետազօտութիւններ կատարել Վլադիկավկազի գծի Պրօխլադնայա կայարանից Զուգդիդի վրայով մինչև Փոթի երկաթուղի կառուցանելու համար։ Հետազօտութիւնները կատարուելու են Բաքուան և Ինգուր գետի հովիտներում։

***

Օգոստոսի 6-ին լրացաւ Ռուսաց աշխարհագրական ընկերութեան գոյութեան յիսնամեակը։ Աչքի առաջ ունենալով, որ այդ ընկերութեան 25-ամեակը տօնուեցաւ 1871-ին, խորհուրդը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրները, որոշեց կիսադարեան յոբելեանը տօնել առաջիկայ 1896 թուի յունվարին։

***

Հետևեալ թուանշանները ցոյց են տալիս, թէ անցեալ 1894 թ. Երևանեան նահանգում և Կարսի շրջանում որքան աղ է արտադրուած.

1) Կողբի արքունական աղահանքերում Զ. Զանփոլադեանի կապալով վերցրած երկու տեղից արտադրուած է 90 բանւորների աշխատութեամբ 912,597 փ. աղ։ Նախիջևանի արքունական աղահանքում, որ կապալով վերցրել է Իս. Զանփոլադեանը, երկու տեղից 11 բանւորների աշխատութեամբ արտադրուած է 178,217 փութ։

Սուստինի մասնաւոր աղահանքում, որ կապալով վերցրել է նոյն Զանփոլադեանը, 9 բանւորի աշխատութեամբ արտադրուած է 143,199 փութ։ Երևանեան նահանգում ընդամենն արտահանուած է 1,234,013 փ.։ Տեղում խոշոր աղը ծախուել է փութը 10 կոպէկ, իսկ մանրը՝ 5 կոպէկ։

2) Կարսի շրջանում նոյն Զ. Զանփոլադեանի կապալով վերցրած արքունական աղահանքում 34 բանւորների աշխատութեամբ արտադրուած է 220,716 փ.։

Միևնոյն կապալառուից վերցրած Օլթի աղահանքում 14 բանւորների աշխատութեամբ արտադրուած է 25,793 փ.։ Կարսի շրջանում ընդամենն արտահանուած է 246,510 փ. Կաղզուանի աղահանքերում վաճառուել է փութը 10 և 5 կոպ. իսկ Օլթիի՝ 15 կոպ. և 10 կ.։

Աղը մեծ մասամբ հէնց տեղն է ծախւում. հեռաւոր շուկաներն են Թիֆլիս և Գորի։ Թիֆլիս է բերւում տարեկան 100,000 փ. Կողբի աղ. ծախւում է 54 կոպ. Կաղզուանի աղը ծախւում է 40 կոպ., իսկ Բագուինը՝ 25 կոպ.։ Վերոյիշեալ արքունական աղահանքերը կապալով են տրուած, Կողբայ աղահանքը 20,000 ռ. Կաղզուանինը՝ 15,000, Նախիջևանինը՝ 7,600, Օլթինը՝ 2,500։ Բանւորների ընդհանուր թիւն է 158. դժբախտ դէպքերից հանքերում մեռել են անցեալ տարի 3 հոգի։

***

Գանձակի նահանգի պղնձէ հանքերում ներկայ 1895 թ. յունվարի 1-ից մինչև յուլիսի 1-ը արտադրուած է. ա) Ալլավերդում եղբ. Խանդուրովների հանքագործարանում 31,259 փութ հում հանք, դրանից ստացուել է 8,634 փ. սև պղինձ և 7,922 փ. 30 գր. մաքուր պղինձ. այդ ամենի համար պետական գանձարանին 5,942 ռուբ. 7 կոպ. հարկ է վճարուած. 2) Նոյն եղբայրների Հալիձորի հանքագործարանում արտադրուած է 21,271 փ. հում հանք. որից ստացուած է 4,895 փութ սև և 4,430 փութ մաքուր պղինձ, վճարուած է 2,215 ռուբլի հարկ։ Մուսա-բէկ Մելիք-Ղարագեօզեանի գործարանում, որ գտնւում է նոյն գաւառում (Զանգեզուր Չաղաձոր) արտադրուած է 14,450 փ. հում հանք. 4,550 փ. սև և 4,916 փ. մաքուր պղինձ. այս գործարանը տակաւին հարկի չէ ենթարկուած. գ) Ղալթարի հանքագործարանում արտադրուած է 16,335 փ. հում հանք, 4,263 փ. սև և 3,301 փ. մաքուր պղինձ (Մուխաֆեանների գործարանն է, որ կապալով վերցրել է Խօջամիրեանը). հարկ վճարուած 2,476 ռ. $12\frac{1}{2}$ կ. ե) Ղազարեանների գործարաններում արտադրուած է 5,166 փութ հում հանք, 1,450 փ. սև և 1,496 փ. մաքուր պղինձ. հարկ է վճարած 748 ռուբ. դ) Ղազախ գաւառի Դիլիջանի հանքերում արտադրուած է 78 փ. 20 գր. սև և 103 փութ 20 գր. մաքուր պղինձ. հարկ՝ 77 ռուբլի 33 կոպէկ։

***

Ստացանք **«Причины бѣдствій Армянъ въ Турціи и отвѣтственность за разореніе Сасуна»** գիրքը—(Թիւրքիայի հայոց թշուառութեան պատճառները և Սասունի աւերման պատասխանատուութիւնը)։ Հեղինակն է գնդապետ Յ. Դ. Լազարեանը (հռչակաւոր զօրավար Յովհաննէս Լազարեանի եղբայրը), որ քաջ ծանօթ է հայերի անցեալ և ներկայ դրութեանը։ Այդ աշխատութեան մասին առաջիկայում զեկուցում կըտանք

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍԱՍՆՈՑ ԻՇԽԱՆ ԹՈՌՆԻԿԸ

Հայաստանը կերպարանափոխ էր լինում։

Հայութիւնը լեռների ամուր տեղերն էր քաշւում, փախչում էր բնիկ երկրից, կոտորւում էր հրով ու սրով։ Թիւրքեր, Թաթարներ և քիւրդեր հեղհեղել գրաւում էին հայկական գաւառները և բնակութիւն հաստատում իրանց ձեռքով աւերուած, մոխիր դարձած շէների ու քաղաքների մէջ։

Յոյները դարերի ընթացքում աշխատել էին հայ իշխանական տոհմերը ջնջել. փակել այն բերդերը, որոնք կարող էին չարութեան դէմ պատսպարել, կարել այն ձեռները, որոնք կարող էին բռնութեան դէմ բարձրանալ։

Աշխատել էին և յաջողել։

Նրանք կործանել էին Բագրատունեաց գահը և Հայաստանի լիազօր տէրը դարձել։

Բայց տէր՝ անունով միայն։ Տէր՝ երբ պէտք է հայերից օգտուէին, իրանց շահերի համար հայերին ծառայեցնէին։ Իսկ օգնել, պաշտպանել հայերին վայրենի և բարբարոս ցեղերի յարձակմանց և աւազակութեանց դէմ՝ այդ նրանց տիրական պարտաւորութիւնների մէջ չէր մտնում։

Երկրի եզերքներում մէկ մէկ իշխանական տներ էին մնացել. հին հայկական հարստութեանց վերջին մնացորդները։ Բայց դրանց իշխանութեանց սահմանները չափազանց նեղ էին և որ գլխաւորն է, նրանց մէջ միութիւն չկար։ Մէկը չկար, որ նրանց գլուխ կանգնէր, առաջնորդէր, բաժան բաժան ուժերը միացնէր և այդպիսով ընդհանուր թշնամու դէմ պատնէշ կանգնէր։

Յոյնը պիտի այդ անէր. բայց նա ուզում էր այդ իշխանական տներն էլ կործանել. նրանց մէջ աւելի խռովութիւն, տակլութիւն, նախանձ էր սերմանում։

Վայրենի ցեղերը գալիս, կոտորում, կողոպտում, աւերում էին, անթիւ գերիներով ու աւարով յետ էին դառնում. նոր էր երևում յոյնը և իր հարկը պահանջում։

«Նմանեցան վատ հովուացն, զի յորժամ զգայլն տեսանէ՝ փախչի», ասում է Մատթէոս Ուռհայեցին յոյների մասին։

«Հայոց տան ամրութեան պարիսպը քանդեցին», և արևելեան գազանների առջև անպաշտպան թողեցին։

—

1057 թիւն էր. պարսիկները լուր առին, թէ յոյները խառնուած են և Հայաստանը անտէր անպաշտպան է։ Թաթարների, Թիւրքերի հետ միացան և ահագին բազմութեամբ Հայաստան խուժեցին։ Առաջին խմբերը կոտորելով և աւերելով մինչև Խախտեաց գաւառը հասան։ Ապա եկաւ գլխաւոր, արիւնածարաւ խուժանը. Մանանաղի գաւառում մի քանի օր մնալով, երկու մասի բաժանուեցան։ Մի մասը դէպի Եկեղեաց գաւառը գնաց. գիշերը Երիզայ քաղաքի վրայ յարձակուեցաւ. անպատրաստ քաղաքացիներին սարսափ պատեց. լեռներ ու ձորեր մարդկանց հետ վայ էին կանչում։ Ամենքը կոտորուեցան, քաղաքը դիակներով լցուեցաւ։ Գիշերն իսկ, անգութ և անկարեկից գիշերը, որ իր խաւար քողի տակ թաղցնում է ամեն մի ոճիր, սոսկաց, սարսափից և երես դարձրեց։ Առաւօտը բացուեցաւ, Կապաղի խուժանը գիշերային չարագործութիւնից չբաւականացած, սուր բարձրացրեց կենդանի մնացած փոքրաթիւ մարդկանց վրայ։ Մարդկային գազանական բնազդները յաղթութեան տօն էին կատարում. վայրենի պար էին կազմում։ Հայերին միանգամից չէին կոտորում. պատառում էին որովայնը, լեարդը հանում և բերանի մէջ դնում. կտրատում էին ձեռներն ու ոտները՝ ու վայր գցում։ Երբ ամեն ինչ վերջացաւ, երբ ինչ կար, չկար հաւաքեցին, ապա կրակ տուին քաղաքը և հեռացան։

Այդտեղից դիմեցին դէպի Կարնոյ գաւառը և յարձակուեցան Բյուր աւանի վրայ։ Շրջակայ գիւղերից ու վանքերից ահագին բազմութիւն եկել, այստեղ էր ապաստանել։ Երբ սրանք տեսան, թէ թշնամիներով շրջապատուած են, սարսափեցին, չգիտէին՝ ինչ անել. ոչ մի տեղից օգնութեան յոյս չկար, ոչ երկրից, ոչ երկնքից։ Բնակիչներից շատերը հողի մէջ փոս էին փորում, մէջը մտնում. շատերն էլ ընտանեօք թշնամու բանակը դիմեցին և անձնատուր եղան. ամբողջ աւանը լաց էր լինում։

Թշնամիները ներս յորդեցին։ Ինչպէս բակում արգելուած ոչխարների վրայ գայլեր յարձակուեն և՝ տեսնելով որ հովիւ չկայ, կոտորեն, այնպէս էին Թիւրքերը հայերին խողխողում։ Ջահելներին անհնարին տանջանքի էին ենթարկում. կենդանի մարդուն վայր էին գցում և մորթը եղունգներով հանում. ոմանց ոսկորներն էին ջարդում. ոմանց մսերն էին կտրում։ Այդպէս է պատմում ժամանակակից պատմագիրը, որ աչքով տեսած բաներն է գրում, բայց ոչ բոլորը. որովհետև անկարելի է այդ բոլոր սարսափները պատմել. բանական մարդու կարողութիւնից վեր է պատմել այն ամենը, ինչ որ մարդկային գազանութիւնն է գործում. «Ձայն տուք երկրի... ձայն տուք երկնի...ձայն տուք լերանց և բլրոց, ծառոց և անտառախիտ մայրեաց. թող լան և ողբան զմեր կործանումն»։

—

Երկրորդ բաժինը Հանձիթի և Խորձենի սահմանները դիմեց. սա էլ նոյն չարիքները գործեց. քաղաքներ ու գիւղեր աւերեց, արեան գետեր դարձրեց. ինչ որ կարող էր հաւաքեց, մնացածը կրակ տուաւ և հեռացաւ։

Վրայ հասաւ Թիւրքերի նոր զօրք, մի անհամար բազմութիւն, որ աւեր ու ամայութիւն սփռելով մինչև Մելիտինէ քաղաքը հասաւ։ Սև ամպի պէս քաղաքը պատեցին։ Բնակիչներն սկսան փախչել. թշնամիները ներս հոսեցին. էլ ոչ տղայ էին տեսնում և ոչ ծեր. ամենքին կոտորեցին։ Այն գեղեցիկ քաղաքը մի ժամում ծայրէ ի ծայր արեան մէջ ծփւում էր։ Կատարածից յետոյ գեղեցիկ կանանց, աղջիկներին ու մանուկներին գերեցին, ոսկու և արծաթի անթիւ գանձ ժողովեցին և դէպի Եկեղեաց գաւառը դիմեցին։

Այդտեղ թափուած արիւնը դեռ չէր ցամաքել. յուսահատ բնակիչները վճռեցին դիմադրել. «մեռնելը մեռնում ենք, գոնէ պատւով մեռնենք», ասացին։ Եւ զինուեցան, բռնեցին այն կիրճերը, որտեղից թշնամու զօրքը պիտի անցնէր։ Առաջապահ գնդերը կիրճերի մէջ ընկան, մնացին։ Պարսիկ, Թիւրք, Թաթար և քիւրդ զօրքերի բազմութիւնը չհամարձակուեցաւ առաջ գնալ, յետ դարձաւ, և միանալով Պարսկաստանից եկող նոր բազմութեան հետ՝ յանկարծակի յարձակուեց Տարօնի վրայ. շէներ ու աւաններ քարուքանդ անելով, Սասունի մօտ՝ Սիմ լերան ստորոտում բանակ դրաւ։

Այդ ժամանակ Սասուն նստում էր Թոռնիկ Մամիկոնեանը, որ իշխան էր Տարօնի վրայ։ Հզօր ձեռքով նա պաշտպանում էր իր երկիրը, խորտակում էր ամեն մի հարուած, որ իր ժողովրդի դէմ էր ուղղուած։ Տարօնի հայը ապրում էր խաղաղ և Թոռնիկ իշխանի կեանքն օրհնում։

Տարիներ առաջ Թոռնիկը մարդիկ ուղարկեց ամեն տեղ. ինքն էլ՝ Խլաթ, Մանազկերտ, Մելիտինէ, Կարին ու Կարս չթողեց՝ ամեն տեղ ոտքի տակ տուաւ, որ Թիւրքերի դէմ հայերին ոտքի կանգնեցնի, բայց յաջողութիւն չունեցաւ։ Ամեն տեղ նա միևնոյն բանն էր ասում.—Թիւրքերը վերջը մեր գլխին պատիժ, պատուհաս պիտի դառնան. եկէք չթողնենք, որ նրանք մեր երկրում հաստատուեն։ Զուր էք ձեր յոյսը յոյների վրայ դնում։ Ասենք յոյնը քրիստոնեայ է, բայց ձեզ պաշտպանողը չի։ Եթէ նա մեր երկրի լաւն ուզէր, մեր թագաւորին խարդախութեամբ չէր տանիլ և շղթաների տակ պահիլ։ Մեր գլխին թափուած չարիքները մեծ մասով յոյների ձեռքովն է եղել։ Էլ ինչ օգնութիւն սպասենք նրանից։ Մեր յոյսը մեզ վրայ պէտք է լինի. մեր հայրենիքը, մեր եկեղեցին, մեր պատիւը մենք պէտք է պաշտպանենք, թէ չէ ամեն ինչ կորած է։ Աստուած էլ է իր երեսը մեզնից դարձրել. որովհետև թոյլ ենք, անգիտան ենք։ Նա մեզ չի օգնիլ, մինչև մենք ինքներս մեզ չօգնենք։ Զէնք ձեռքի առնենք, միանանք, խմբեր կազմենք, ճանապարհները կտրենք և թոյլ չտանք, որ Թիւրքը մեր երկրի խորքերը մտնի։ Մեզ թիկունք կը լինին մեր լեռները, մեզ կօգնեն մեր կիրճերն ու ձորերը։ Զուր էք վախենում Թաթարներից. նրանք քաջ չեն. մեր թուլութիւնն է նրանց սիրտ տալիս։ Հապա յիշեցէք, թէ ինչ են դարձել այդ Թաթարները, երբ որ և է տեղ հայերը նրանց դիմադրել են. յիշեցէք Պահլաւունի Վասակին՝ իմ կնոջ պապին. 500 մարդով Տուղրիլ բէգի 20,000 զօրքի դիմացը դուրս եկաւ և ամօթով փախցրեց նրան։

Բայց Թոռնիկի խորհուրդը չլսեցին. մէկն ասում էր՝ ոչինչ չի լինիլ, միւսը՝ թէ ինչ կարող ենք անել այդ ահագին բազմութեանց դէմ, երրորդը նախանձում էր, չորրորդը յոյներից էր պաշտպանութիւն սպասում։

Տխուր, յուսահատ՝ Թոռնիկը Սասուն էր քաշուել և իր երկիրն էր պաշտպանում։ Քանի՜ ու քանի՜ անգամ Թաթարների հրոսակները Տարօն էին մտել և լաւ ջարդուել ու փախել։

Այժմ նրանք ուզում էին վրէժ առնել Թոռնիկից. անհամար բազմութեամբ յանկարծակի Սասունի վրայ դիմեցին, որ Թոռնիկին անպատրաստ գտնեն։

Բայց Թոռնիկը պատրաստ էր. նա գիտէր թէ ինչե՜ր են կատարւում իր շրջակայքում։ Ձայն տուեց, ամբողջ Սասունը դղրդաց, ոտքի կանգնեց։ Առաւ իր քաջերին ու թշնամու վրայ յարձակուեց։ Պատերազմական փողերը փչեցին։ Ինչպէս առիւծների ջոկատները իրար վրայ ընկնեն, այդպէս էին կռւում երկու կողմերը։ Պատերազմը քանի գնում սաստկանում, յաղթութիւնը անորոշ էր մնում։ Երկու կողմից քաջերն իրար հանդիպելով՝ զարկում, բաղխում էին

ընթերցողներին։ Գիրքը տպուած է Ց. Մարտիրոսեանի տպարանում. գինն է 30 կոպէկ։

* * *

«Kurjer Warsz.»-ի լրագրին հաղորդում են Փարիզից, թէ այնտեղ մի քանի շաբաթ մնացել է օր. Բակշեևիչը, որին Թիֆլիզի ուսուցչուհեաց ընկերութիւնը ուղարկել էր այնտեղ տարրական դպրոցների կազմակերպութեան հետ ծանօթանալու։ Լրագրի ասելով ընկերութիւնը կամենում է օգտուել օր. Բակշեևիչի ցուցմունքներից՝ հիմնելով նոր հայկական եւ վրացոց ուսումնարաններ։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր.

Սասուն-Տալւորիկի աղէտալի, ամենացաւալի և սրտաճմլիկ անցքերն, քառասունէ աւելի գիւղերու այրեցաւեր լինելն, ընչից և անասնոց զրկուիլն ու թալանուիլը և կոտորածէն զերծ մնացող այդ վտարանդիներու ի սփիւռս աշխարհի մուրացկանութեան համար թափառաշրջիլն՝ համայն ազգայնոց յայտ է արդէն։

Որչափ կարելի էր, Մշոյ քաղաքացիք և գիւղացիներն առատատեւ և պարէն տալով ցարդ օգնութեան հասան. բայց մըշեցիք ևս ոչ նուազ վիճակակից են գաւառացիներուն, ուստի անհնար է օգնութեան այլ ևս համնիլ ու փրկել սովամահ կորնչելէ այդ անտուն, անտէր, անպատսպար և դրկեալ ամենաթշուառները։

Ձմեռնը բնականաբար մահ պիտի լինէր սովեալներուն, որք միանգամայն կրած էին մերկութիւն և անպատսպարան մնալու դժնդակ աղետութիւնը։ Ներփակ ցուցակն աւելի պերճախօս պիտի լինի, յորում նշանակուած են բնակարանի անյարմարութենէն և անօթութենէն սովամահ կորնչողներն (մեզ ի պաշտօնէ հաղորդուած) և թէ որչափներ կան դեռ անյայտ։

Արդ՝ նկատելով այդ խեղճերու ամենադառն կացութիւնը, նկատելով մեզերու օգնութեան հասնելու անբաւական և անձեռնհաս գտնուիլը և որ առաւելագոյն է, նկատելով՝ որ նօթութիւնն սկսած է իր զոհերն ունենալ, կուգամք հրաւէր կարդալ համազգայնոցս, յանուն կրօնի բարեպաշտական զգացմանց, յանուն մարդասիրութեան և յանուն ազգութեան՝ օգնութեան համնել Սասուն-Տալւորիկցի կոտորածէ զերծ մնացած մահամերձ թշուառներու. և կը խնդրեմք որ ձեր պատուական օրաթերթի պատուական էջերուն մէջ հրաւէր կարդաք մեր մարդասէր ազգայնոց գթութեան, կարեկցութեան և մարդասիրութեան և ժամ առաջ նպաստներ ու օգնութիւններ հասցնել Սասնոյ-Տալւորիկի արկածեալ և սովամահ հայոց, որով յաւէտ երախտապարտ կը կացուցանէք այդ թշուառներն և զմեզ զամենեսեան։

Մնաք յարգանօք աղօթարար՝

Առաջնորդ. տեղապահ Վարդան վարդապետ Ցակոբեան, Ցովհաննէս վարդապետ Մուրադեան՝ վանահայր ս. Առաքելոց վանից Մշոյ, Ղևոնդ քահանայ Ղևոնդեանց, Ցակոբ Միրզոյեան՝ քարոզիչ։ (Ներքեւ)

Մուշ յուլիսի 10.

* *

Պաշտօնապէս հաղորդվում է, որ Վոլինի նահանգում յուլիսի 9-ից մինչև յուլ. 22-ը խոլերայով բռնուել են 688 մարդ և վախճանուել 238։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԱՄՍՈՆ, օգոստոսի 4-ին.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Պատրիարքարանէն ասո հասած հեռագրի մը համաձայն, որ կաւետէր Սուլթանի հայ բանտարկեալց ազատութեան լուրը, մեր քաղաքի բանտարկեալներէն ազատուեցան պատանի Փերդինանդ Աբրահամեան, Ցարութիւն Պաղչէեան և Ցակոբ Թահմիզեան։

Պ. պ. Մինասեան Ցովհաննէս և Ցովսէփը, որոնք քաղաքիս բանտին մէջ կը տառապէին, վերջապէս փախստեան մը ազատութիւնն յուսացան։ Շատերը կը խօսէին թէ բանտային իշխանութիւնը անոնց կամ խնդրամահ բրած է և կամ թէ հեռաւոր տեղ մը աքսորած, ոմանք ալ կը խօսին, թէ բանտին որմը ծակելով փախած և լեռ ապաստանած են։ Թէ այսպէս և թէ այնպէս վերջապէս երկու անձնաւորութիւնն ալ այժմ անյայտ են։

Ցայտնի դատաճան լրտես Տիրատուրեան Խորէն քահանան, որ սրբապղծութիւն մէ իւր նուիրական կոչման, արդէն ճանապարհուած է դէպի Կ. Պոլիս։ Զայն խիստ հեռագրով մը կանչէր էր Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը։

Քաղաքիս միւս աշխարհական հայ երեք մատնիչները՝ Պօղոսեան Խաչատուր, Մարեան Միսաք և Փափազեան Տիգրան էֆենդիները, երբ լսեցին հայ բանտարկեալց ազատութեան լուրը, անմիջապէս սկսեցին խոյս տալ քաղաքէս։

Խաչատուր Պօղոսեան էֆենդին, որ պաշտօնով հայ ներկայացուցիչ էր Մահքէմէյի-Պտէլէ դատաստան բաժնի մէջ՝ Կ. Պոլիս փախած է։ Մարեան Միսաք էֆենդին Աղէքսանդրիա, իսկ Տիգրան Փափազեանը դեռ տեղս է։ Ժողովուրդի արդար զայրոյթը արդարև այժմ անշահս լաւ հասարակ աղանց մասին։

Թէ որքան պատուորութիւն արաւ Սուլթանի ռէֆորմների մերժողական լուրը, այդ աննկարագրելի է։ Ցուսահատութիւնը, որի մէջ այժմ ընկած է հայ հասարակութիւնը, ընդհանրական է և յուզիչ։ Ս-ի։

ԲԱՅԲՈՒՐԴԻՑ մեզ գրում են յուլիս 29 թուով.

«Ըստ Հայաստանեայց հնաւանդ սովորութեան ամեն տարի քրիստոնեայ չիմանալով հոծ բազմութիւն մը կը համախմբուէր քաղաքէս քիչ հեռու, Ս. Ցովհաննու վանքի մէջ, և այնտեղ կը կատարէր մխիթարական տօն մը։ Բարեպաշտ հայ ժողովրդի տուած յումենուներով աճս պարիսպ ընթացքով այս վանքը կառավարուած և գոյութիւն ունեցած է մինչ ցարդ։ Սակայն վերջին տարիներս, երբ տիրող տէրութեան և միւս մահմեդականաց արհաւիրքը գնալով սաստկացաւ, պակասեց ուխտաւորաց թիւը և վանքը համարեա ճըմլեց պարտքի տակ։ Ինչպէս ի հընումն, նոյնպէս և ներկայ տարւոյ Վարդավառի տօնին, երբ սկսան ուխտաւորաց խմբեր երեւալ վանքի շրջապատներ, յանկարծ ամեն կողմ բուսան աւազակ թիւրքերի խմբերը և ամեն հանդիպողը կողոպտեցին և տանջանքներ ենթարկեցին։ Առաջին զոհ գնացողներ եղան Չիպոտ, Ճէրսատ, Ջուրակէն և Բալկօն գիւղերի բնակիչներ, որոնք թուով 250-էն աւելի էին՝ այր, մանուկ, կին և ծեր։ Աւազակները թուով 12 հոգի էին և զինուած նոր ձևի հրացաններով և զէնքերով»։

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Die Anfänge der armenischen Kirche)

Եռայի համալսարանի հին պատմութեան և լեզուագիտութեան յարգելի պրոֆեսոր Գելցերը Գերմանիայի այն սակաւաթիւ գիտնականներից է, որոնք զբաղուած են հայ ազգի հին պատմութեան և գրականութեան ուսումնասիրութեամբ։ Այս յօդուածով մենք մտադիր ենք քաղուածօրէն հաղորդել «Արձագանքի» ընթերցողներին նրա այն դասախօսութեան կէտերը, որ կարդացել է Լայպցիգի գիտութիւնների ճեմարանում և որ նորերս տպագրուել է այդ հիմնարկութեան գիտական հանդէսում։ Դասախօսութեան վերնագիրն է. „Die Anfänge der armenischen Kirche", այսինքն «Հայկական եկեղեցու սկզբնաւորութիւնը»։

Հայ պատմիչները Լուսաւորչին իբրև մի երկրորդ Մովսէս են ներկայացնում։ Նա Հայաստանում ոչ միայն քրիստոնէութիւնն է տարածել, այլև հերարխիական ամբողջ կարգ ու կանոնները և եկեղեցական գիոցեզեան հաստատել է։ Հայկական ազգային եկեղեցին կարծում է, թէ Լուսաւորչից սահմանուած եկեղեցական կարգապահութիւնը մինչև այսօր անփոփոխ պահպանուել է։ Բայց Հայկական եկեղեցու այս կարծիքը միայն սահմանափակ չափով է ուղիղ։ Հին դարերի հայկական եկեղեցին յետագայ ժամանակաց եկեղեցուց մի մեծ անդունդով բաժանուած է։ Հինգերորդ դարու առաջին կէսի հայկական ուղեղութը մասամբ յունական ազդեցութեան արդիւնքն է։ Այս ազդեցութեամբ այդ եկեղեցին, որ առաջին անգամ ազգային բնաւորութիւն ունէր, յունական և ասորական հարեան եկեղեցական համայնքների կաղապարով կերպարանափոխուեց։ Չորրորդ դարում արդէն Ներսէս կաթողիկոսն ուզում էր այս յեղափոխութիւնը առաջ բերել, բայց չկարողացաւ, որովհետև նա իւր հայրենակիցների եկեղեցական զգացմունքների վրայ քիչ ուշադրութիւն դարձրեց։

Միայն Սահակ Մեծը կարողացաւ այս յեղափոխութիւնը յառաջացնել և իւր նպատակին համնել։ Հայկական եկեղեցու սկզբնաւորութեան ճշմարիտ պատմութեան հետ ծանօթանալու համար՝ իբրև քիչ ճշմարիտ աղբիւրներ մեզ համար ծառայում են Ագաթանգեղոսի և Փաւստոս Բիւզանդացու պատմական աշխատութիւնները։ Այս երկու աղբիւրները զիրաջանց են։ Ա. Ֆոն Գուտշմիտը իւր քննադատական խիստ անալիզով Ագաթանգեղոսի մեզ հասած երկասիրութեան մի կտորը, որտեղ պատմուած են Հայաստանում քրիստոնէութիւն տարածուիլը և որանից յետոյ եղած գործերը «Ս. Գ. Լուսաւորչի կեանքը» վերնագրի տակ է դնում և այդ մասը պատմական է համարում։ Չորրորդ դարու պատմութեան համար, խիկպէս Տրդատի մահից յետոյ մինչև սէրութեան բաժանումը, Փաւստոսի պատմական աշխատութիւնն առաջին կարգի պատմական մի աղբիւր է։ Այդ աշխատութեան արժէքը հայազգէտ գիտնականները վաղուց են ճանաչել։ Բայց այն արժանահաւատ տեղեկութիւնը, որ Փաւստոսը իւր անձնաւորութեան մասին է յիշում, հայր Գարեգինը և Էմինը փչացած կամ եղծուած են համարում։

Այս տեղեկութիւնը հետևեալն է։ Փաւստոսը թւում է այն իշխաններ, որոնք Ներսէսից կաթողիկոսը Ցուսիկին դէպի Կեսարիա են ուղեկցում և ամենից վերջը յիշում է, «և զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց»։ Բ հարկէ շատ ուղիղ է, երբ Փաւստոսը միւս իշխաններին իրանց անուններով է յիշում։ Բայց առողջ քննադատութեան հակառակ վարմունք է, երբ հայ գիտնականները այս նախադասութեան մէջ փոխանակ մի անուան բացակայութիւնն ընդունելու, երկու բոլորովին հասկանալի խօսքերը փչացած կամ եղծուած են համարում։

Մնում է ընդունելու, որ Փաւստոսը Սահառունեաց իշխանական ցեղին էր պատկանում։ Էմինը շատ ուղիղ նկատել է, որ մեր Փաւստոս պատմիչը նոյն անուն Փաւստոս եպիսկոպոսը չէ։ Բայց Էմինը սխալւում է, երբ ասում է, թէ Փաւստոսը ձեռնադրութիւն չէ ստացել։ Փաւստոսի աշխատութիւնը մեզ ցոյց է տալիս, որ հեղինակը սաստիկ խառնուած էր իւր ժամանակի հերարխիական կռիւներում։ Նրա դէպի հոգևորական դասակարգն ունեցած հակումն ցոյց է տալիս, որ նա էլ էր այդ շրջանին պատկանում։ Չորրորդ և հինգերորդ դարերում Հայաստանում հազիւ գտնուէր մի աշխարհական մարդ, այնպէս կրթուած՝ որ կարողանար իբրև պատմիչ առարկեյ դուրս գալ։ Փաւստոս եպիսկոպոսի յարաբերութիւնը Ներսէս կաթողիկոսի հետ շատ անհեթեթ էր։ Բայց Փաւստոս պատմիչը Ներսէսի ժամանակակից մարդ չէ երևում, որովհետև նա վերջինիս վերաբերեալ ժամանակագրական և ուրիշ շատ սխալներ է անում։ Փաւստոսի աշխատութիւնը կրում է «Բուզանդարան պատմութիւնք» վերնագիրը, այսինքն բուզանդացու պատմութիւնների բացատրութիւնը, որ իւր մէջ մեր գիտնականի կարծիքով սխալ է պարունակում, որովհետև մարդ բիւզանդացւոյ 'կամ բիւզանդիա բառին է սպասում։ Այս վերնագրի մասին Էմինի առածը բաւարար չէ։ «Ախտ՞ն որ կորել են այն տողերը, որոնք Փաւստոսը իւր անձի մասին 4-րդ գրքի վերջում ասել է»։

Մեծ արժէք ունին Հայոց արժանահաւատ պատմագիրներից մէկի — Ղազար Փարպեցու Փաւստոսի մասին տուած տեղեկութիւնները։ Փարպեցին նրան կոչում է «Փաւստոս կամ Փաւստոս Բիւզանդացի» և վերջինիս աշխատութեան վերնագիրն անուանում է «Հայոց պատմութիւն»։ Փարպեցին մեզ նոյնպէս ծանօթացնում է Փաւստոսի աշխատութեան բովանդակութեան հետ, որից երևում է, որ Փաւստոսը Ագաթանգեղոսի պատմութեան շարունակողն է եղել։

Այժմ, Փաւստոսը իւր աշխատութիւնը հայերէն է գրել, թէ դա յունարէնից թարգմանուած է։ Այն յունարէն բառերից, որոնք Փաւստոսի աշխատութեան մէջ են գտնւում, ոչինչ չենք կարող եզրակացնել։ Այդօրինակ բառերից են ստրատեգ, ստրատելատ, արքեպիսկոպոս, օրթոդոքս եայլն, որովհետև մենք գիտենք, որ 4-րդ դարու առաջին կիսում Հայաստանը հռոմէական տէրութեան հետ սերտ յարաբերութեան մէջ էր գտնւում, ուրեմն և այդ բառերը կարող են փոխառուած բառեր լինել։ Բայց թէ Փաւստոսի աշխատութիւնը յունարէն խօսում կար, այդ բանը մեզ ասում է Պրոկոպը իւր «Պարսկական պատերազմում» 1, 5 (տ. 26, 11-30, 23) և Փաւստոսի աշխատութեան երկու կտորները (Դ. 52—54 և Ե 7) բերում է։

Հետաքրքիր է այստեղ նկատել, որ Պրոկոպի Փաւստոսի աշխատութեան համար տուած վերնագիրը համապատասխան է Փարպեցու ասած վերնագրին։ Բայց ցաւալի է, որ Պրոկոպը Փաւստոսից առած կտորները մեզ միևնոյն ձևով չէ հաղորդում, որպէս դրանք նրա աշխատութեան մէջ են եղել, այլ փոփոխած և կրճատած ձևով։ Պրոկոպից մենք չենք կարող եզրակացնել, թէ այդ յունարէն գրուածքը բուն տեքստ է եղել, թէ դա միայն հայերէն մշակուած մի աշխատութիւն։

Փաւստոսը իւր աշխատութեան Դ-րդ գրքի վերջում ասում է հետևեալը։ «Պատարեւցաւ երրորդ դպիր, քանի և մի պատմութեանց դպրութիւնք, ժամանակագիր կանոնք փոխառեալք Բիւզանդեայ ժամանակագրի մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր Ցունաց»։ Այս կտորը համաձայնում է Փարպեցու Փաւստոսի մասին տուած տեղեկութեան հետ։ Փարպեցին շեշտում է Փաւստոսի գրքի պատմական արժանահաւատութեան մասին և նրան պաշտպանում է ազգային պարզութեան մէջ վիրաւորուած իւր հայրենակիցների յարձակումներից։ Փարպեցին խոստովանում է, որ Փաւստոսի աշխատութեան մէջ կասկածելի կտորներ կան, բայց նա այդ բանը վերագրում է անփորձ բացատրողներին։ Փաւստոսը Բիւզանդիայում կրթութիւն ստացած լինելով, այդպիսի բաներ չէր կարող գրել։ Լաւ կլինէր, եթէ Փարպեցին Փաւստոսի Բիւզանդիայում ապրած ժամանակի մասին մօտ և որոշ տեղեկութիւններ տուած լինէր։ Բայց նա էլ, ինչպէս երևում է, այդ բանի մասին մեզ նման ոչինչ չէ իմացել։ Դրա համար Փարպեցին իւր ընթերցողին ծանրաբեռնում է Կոստանդնուպօլսի հիմնարկութեան մասին տուած տեղեկութեամբ և այդ բանը այնտեղ է պատմում, որտեղ Փաւստոսի Բիւզանդիայում եղած ժամանակի մասին է խօսում։ Ինչպէս երևում է, նա Փաւստոսին ապրեցնում է Բիւզանդիայում, այդ բանը միայն նրա Բիւզանդացի տիտղոսից եզրակացնելով։ Հաւանական է, որ Փարպեցին Փաւստոսի աշխատութեան լեզուի մասին խօսում է այնտեղ, որտեղ նա գտնում է այն թեթևամիտ մարդկանց, որոնք իրանց խոյատակութեան սխալները Փաւստոսի անուան տակ են ծածկում, այսինքն նրա աշխատութիւնը կեղծում են։ Փարպեցին անկցնում է, որ այդպիսի մարդիկ շատ կան Ցոյների մանաւանդ Ասորիների մէջ։ Բայց յոյները կարող են գլխաւորապէս յունական աշխատութիւն կեղծել։ Այս բանից պրոֆ. Գելցերը եզրակացնում է, որ Փարպեցու կարծիքով Փաւստոսը իւր աշխատութիւնը առաջ յունարէն է գրել, այսինքն բնագիրը յունարէն լեզուով է գրուած եղել։ Փաւստոսը իւր աշխատութիւնը գրել 4-րդ դարու վերջում, հաւանական է Վռամ-Շապուհի թագաւորութեան (395—416) առաջին տարիներում։ Փաւստոսի 4-րդ գրքում նկարագրուած եպիսկոպոսները նորա ժամանակակիցներն են և մասամբ էլ ծանօթները։ Նրա աշխատութիւնն աւելի հին է քան Հայոց գրերի գիւտը, ուրեմն այդ գիրքը պատ-

---

միմեանց և ընկնում. երկիրը արեամբ էր ներկւում։

Թոռնիկը երեսը դէպի ս. Կարապետի վանքը դարձրեց, ուժգին ձայն արձակեց, ասաց. «Գլակայ վանք, ո՜վ սուրբ Կարապետ, օգնիր մեզ, թող այս օրը հաւատացեալների համար երևելի լինի»։ Սասունցի քաջերը միարան նոյնը կրկնեցին.—մա՜հ կամ հայրենիքի ազատութիւն, գոռալով, թշնամու աջ թևի վրայ յարձակուեցան և ջարդելով յետ դարձրին նրան։ Թիւրքերը սարսափած սկսեցին փախչել. բազմաթիւ գերիները և հարուստ աւարը, որ զանազան տեղերից, մանաւանդ Մելիտինէից էին բերել, թողեցին և այնպէս փախան։ Թոռնիկը գերիներին իրանց տեղերը դարձրեց և մեծ աւարով Սասուն վերադարձաւ։

—

Այդ ժամանակները Փոքր-Ասիայի հայոց և թիւրք իշխանների մէջ իւր չարութիւններով յայտնի էր Փիլարէտ կամ Փիլարդոս անունով մի իշխան։ Հայ էր ծագումով, այլ հայութիւնից վաղուց կտրուած. մի ժամանակ նա յոյն դաւանութիւն էր ընդունել, ապա մահմեդական դարձել։ Թիւրքերի հետ բարեկամութիւն հաստատած՝ թէ նրանց էր օգնում հայերի դէմ և թէ նրանցից օգնութիւն էր ստանում դարձեալ հայերի դէմ։ Ցանդուգն, խորամանկ և բռնակալ մարդ էր. Խարբերդից և Մարաշից բռնած՝ մինչև Անտիոք և Ուռհա տիրապետում էր նա։

Տարօնի և Սասնոյ անկախութիւնը նրա քունը կտրել էր։ Անդադար այն էր մտածում, որ Մամիկոնեան Թոռնիկ իշխանին նուաճի. և դրա համար ամենայն խորամանկութեամբ գործում էր։

Մի քանի անգամ թիւրքերին գրգռեց Թոռնիկի դէմ. Թիւրքերը Փիլարդոսից էլ ճանապարհներին տեղեակ առաջնորդներ վերցնելով՝ Թոռնիկի վրայ յարձակուեցան։ Բայց ամեն անգամ յետ դարձան ամօթով, ահագին կորուստ ունենալով։

Նստած Սասուն բերդում՝ Թոռնիկը սուր աչքով նայում էր ամեն կողմ. և երբ թշնամին համարձակւում էր Տարօն կամ Սասուն մտնել, կայծակի պէս ցած էր թռչում և թշնամու բազմութիւնը ջնջում, կոտորում։

Փիլարդոսը տեսնում էր այդ և աւելի չարանում. բայց Թոռնիկից վախենում, նրա դէմ ուղղակի զէնք չէր բարձրացնում։ Դեսպաններ ուղարկեց քաջ Թոռնիկի մօտ և պահանջեց, որ Սասունը իրեն տայ։

Դեսպաններից այդ յանդուգն պահանջը լսելով, Թոռնիկը ծիծաղեց և ասաց.

«Քանի տարի է, թաթարների հրոսակները զէնքով չեն կարողանում Սասնոյ անկախութիւնը կործանել, այժմ այդ անմիտ ուզում է բարեկամութեա՞մբ մեզ ստրուկ դարձնել։ Թիւրքին ես այնքան չեմ ատում, որքան Փիլարդոսին. գնացէք, ասացէք, որ զզւում եմ իրանից և երեսն էլ չեմ ուզում տեսնել»։

Դեսպաններն ասացին.—Բայց այդ խոհեմութիւն չէ քո կողմից, Թոռնիկ իշխան. Փիլարդոսը մեծ զօրքով կը գայ և կ'աւերէ քո երկիրը։

Թոռնիկը հարցրեց. «Որքա՞ն զօրք ունի»։ Ասացին.—Աւելի քան քսան հազար։

«Հազար ձիաւոր ունիմ, որոնք ոգևորուած են իրանց հայրենիքի ազատութեան մտքով. դրանք Փիլարդոսի քսան հազարն այնպէս կոչնչացնեն, ինչպէս հրդեհը անտառն է այրում, փչացնում»։

Դեսպանները գնացին և այդ ամենը պատմեցին Փիլարդոսին։ Դրա իշխանութեան սահմաններում էր գտնւում Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը, որի փեսան էր քաջ Թոռնիկը։ Փիլարդոսը Վկայասէրին իւր մօտ կանչեց, ասաց.

«Փեսադ է Թոռնիկը. գնա, խօսիր հետը, խելքի բեր. թող ինձ հնազանդի, թէ չէ Սասունը քարուքանդ կանեմ և նրա հազար ձիաւորին ողջ ողջ կըրակում ու տանջանքներով կըկոտորեմ»։

Ի՞նչ անէր խեղճ կաթողիկոսը. յանդուգն բռնակալին լաւ էր ճանաչում։ Վեր կացաւ և ակամայ Թոռնիկի մօտ գնաց, էլ յետ չդարձաւ։

Փիլարդոսը հասկացաւ, որ Թոռնիկը չի ուզում հնազանդութեան գալ։ Մեծ զօրք ժողովեց. հարևան թաթերից ու քիւրդերից էլ օգնական զօրքեր բերել տուաւ և անհամար բազմութեամբ Թոռնիկի վրայ գնաց։

Թոռնիկը զինեց, պատրաստեց Սասունի, Մուշի ու շրջանների քաջերին. յիսուն հազար հետևակ և վեց հազար ձիաւոր զօրքով Փիլարդոսի առաջը դուրս եկաւ։ Հասաւ Ճապաղջուր, տեսաւ, որ Փիլարդոսը չկայ, մի քանի օր սպասեց, Փիլարդոսը չերևաց։ Կարծեց, թէ բռնակալն այլ ևս չի գալու, հետևակ զօրքը արձակեց, որովհետև պաշարն էլ բաւական չէր։ Իսկ ինքը հազար ձիաւորով միայն յետ դարձաւ դէպի Աշմուշատ քաղաքը։ Հանձիթ գաւառի Այգայ դաշտում նրա հանդէպը դուրս եկաւ Փիլարդոսը իւր զօրքով։

Վախեցաւ Թոռնիկը. ի՞նչ պէտք է անէր հազար ձիաւորով այդքան բազմութեան դէմ. նա աւելի վախենում էր, թէ գուցէ իւր ձիաւորները թշնամու բազմութիւնից սարսափած՝ չկամենան քաջութեամբ կռուել։ Հաւաքեց ամենին և այսպէս խօսեց.

«Քա՛ջ սասունցիք. թշնամին ահագին զօրքով կանգնած է այստեղ. մենք կարող ենք փախչել, լեռներում ու ձորերում թաղնուել և մեր կեանքը փրկել։ Այդ ժամանակ Փիլարդոսը կըմտնի մեր երկիրը, արիւնով կը ներկի մեր կանաչ բլուրները, կաւերի մեր շէներն ու քաղաքները. քար չի թողնի քարի վրայ. մեր կանանցը, մեր աղջիկներին ու արդաներին գերի կըտանի. ազատ և սիրուն Սասունը շղթաների տակ կընկնի. և բռնակալի ծանր շղթաների տակ հեծող ժողովուրդը՝ ազատութեան սովոր սասունցին եմ ասում, նզովքի և անէծքի կըրակ կըթափի մեր գլխին։ Ես չեմ ուզում այդ օրը տեսնել. զէնքը ձեռիս թշնամու վրայ կը յարձակուեմ. ս. Կարապետը կօգնի ինձ, չի թողնի, որ թշնամիներն ուրախանան. եթէ չյաղթեմ, գոնէ պատուով կը մեռնեմ և Սասունը շղթաների տակ չեմ տեսնի։ Սասունցի քաջեր, յիշեցէք ձեր նախնեաց քաջութիւնները, ցոյց տուէք, որ նրանց հարազատ որդիքն էք»։

Հազար ձիաւորը մի մարդու պէս ձայն տուաւ. «Մենք մեր իշխանի հետ ենք»։

Թոռնիկն ասաց. «Ս. Կարապետը մեզ թև ու թիկունք կըլինի, մեր բազուկներին ոյժ կըտայ. թշնամու բազմութեամբ կըյաղթենք և ամօթով կը փախցնենք»։

Եւ իսկոյն զօրքը մի քանի խմբերի բաժանեց. Մի խումբը դէպի թշնամին գնաց. միւսները աջ ու ձախ բլուրների ետևում թաղնուեցան։ Փիլարդոսը նայեց ու տեսաւ, որ իւր դէմը մի քանի ձիաւորներ են գալիս։ Զարմացաւ դրանց յանդգնութեան վրայ, իսկ զօրքն ապշեց. Հանդիստ ու խաղաղ առաջ էր գալիս. Փիլարդոսը մտածում էր ամենքին ողջ-ողջ բռնել։ Իսկ սասունցիք մի բլրի լանջին կանգնել էին, տեղից չէին շարժւում։ Փիլարդոսը մօտեցաւ։ Սասունցիք «Ո՜վ Գլակայ վանք» կանչեցին, և թշնամու վրայ յարձակուեցան։ Բլրների ետևներից դուրս եկան թաղնուած խմբերը և կայծակի պէս թշնամու վրայ ընկան։ Ահ ու սարսափ տիրեց ամենքին. կարծում էին, թէ ամեն մի քարի ետևում, ամեն մի թփի արանքում մի սասունցի, մի դև կայ կանգնած։ Թոռնիկը առիւծի պէս գոչում, սիրտ էր տալիս իւր մարդկանց, որոնք անխնայ կոտորում էին։ Ապշած թշնամին յետ դարձաւ, փախաւ, սասունցիք շատ մեծամեծներ գերեցին, շատ աւար վերցրին և յաղթական երգերով Սասուն գնացին։

Թոռնիկը Աշմուշատ բերդն էր գնացել. զօրք չկար հետը, ինքն էր և իւր մի քանի հաւատարիմ ծառաները։ Փիլարդոսն այդ իմացաւ և Ամիր-Քաֆր ամիրային գրեց՝ Աշմուշատը գրաւել։ Ամիր-Քաֆրը մեծ զօրքով եկաւ և Աշմուշատի մօտ բանակ դրաւ։ Շատ գանձ ու պարգևներով մարդիկ ուղարկեց Թոռնիկի մօտ, ասաց. Նոր «Թիւրք զօրքեր են գալիս. դուրս եմ եկել նրանց առաջը կտրելու, որ առ չգնեն իմ երկրում։ Եկ ուխտենք, մեր մէջ սէր, միաբանութիւն հաստատենք, և եկող թիւրք բազմութեան դէմ միացած ուժերով մեր երկիրներ պաշտպանենք»։

Թոռնիկը հաւատաց ամիրայի խօսքին. և ինչպէս չհաւատար, եթէ չարութիւն է միտքը, ինչո՞ւ է պարգևներ ուղարկում. ինչո՞ւ չէ իւր մեծ զօրքով Թոռնիկի վրայ յարձակւում, որ մենակ է Աշմուշատ բերդում։ Իւր մարդկանցից մի քանիսին ամիրայի մօտ ուղարկեց, որ պատրաստ է սէր, բարեկամութիւն հաստատելու։ Ամիրան շատ պատուեց Թոռնիկի մարդկանցը. Նրանց շատ գանձ ու պարգևներ տուաւ և Թոռնիկին իւր մօտ հրաւիրեց։

Թոռնիկը գնաց իւր թիկնապահների հետ և մեծ փառքով ընդունուեցաւ։ Երկրորդ օրը ամիրան սեղան կազմեց, հրաւիրեց իւր բոլոր մեծամեծներին։ Թոռնիկն այդ օրը յետ պիտի դառնար. ամիրան ուզում էր նրան վերջին անգամ լաւ պատուել։ Երբ ամենքը լաւ ուրախացել էին, Ամիր-Քաֆրը յանկարծ տեղից բարձրացաւ և սուրը ձեռքին գազանաբար Թոռնիկի վրայ վազեց։ Թոռնիկը զէնք չունէր մօտը. դանակը հանեց և՝ մինչև ամիրան կը զարկէր, նրա կրծքի մէջը խրեց. նա վայր ընկաւ։ Թոռնիկը միւս իշխաններին բռնեց, գլուխները այնքան իրար զարկեց, որ ամենքն էլ մեռան։ «Թիւրքին այսպէս պիտի պատժել», ասաց Թոռնիկը իւր թիկնապահներին։ Ամիրայի զօրքը փախաւ։

Քաջ Թոռնիկը դէպի Աշմուշատ դարձաւ. միամիտ սրտով, փառք տալով Աստծուն՝ նա գնում էր նեղ կածանով, թիկնապահները յետ էին մնացել։ Թըփերի ետևում թաղնուած մի թիւրք տեսաւ Թոռնիկին. չարութեամբ փայլեց նրա երեսը։ Նետաւաղեղը հանեց, նշան դրաւ և արձակեց։ Թոռնիկը ձիուց շըլնշապառ ցած գլորուեց։ Թիւրքը դուրս եկաւ թաղստեան տեղից, Թոռնիկի գլուխը կտրեց և անտառի խորքերն ընկաւ, տարաւ թանկագին ընծան և Փիլարդոսին տուաւ։ Բռնակալը Թոռնիկի սկաւառակը հանեց և նրանով էր միշտ գինի խըմում։

Սիւնի։

կանում է Հայաստանի գրականագրական ժամանակաշրջանին և մի օտար գաւառաբարբառով գրած պէտք է լինի: Պրոկոպը, ինչպէս վերև յիշեցինք, Փաւստոսի աշխատութիւնից մի քանի հատուածներ է վերցրել և դրանց՝ իր մշակուած լեզուով փոփոխելով իր աշխատութեան մէջ է մուցրել: Մի քանի յատուկ անուններ, որոնք բերուած են Պրոկոպի Փաւստոսից առած հատուածներում, ցոյց են տալիս որ Փաւստոսը յունարէնին քաջ ծանօթ չէր:

Ինչպէս երևում է, Փաւստոսը իւր աշխատութիւնը յունարէն մի գաւառաբարբառով է գրել և ոչ թէ յունարէն հասարակական լեզուով: Փաւստոսի աշխատութիւնը մեզ ցոյց է տալիս, որ դրա հեղինակը ոչ թէ յոյն, այլ իւր ամբողջ արիւնով մի արևելցի, շատ հաւանական է՝ մի հայ է: Նրա աշխատութիւնը մի հայելի է, որի մէջ իւր ժամանակակից Հայաստանի այնուական և հոգևորական դասակարգերի պատկերներն են երևում: Միայն ազգով հայը, որ այդ երկու դասակարգերից մէկի անդամն էր, կարող էր մեզ մի այդպիսի լաւ հասկացողութեամբ այն ժամանակուայ դրութիւնները նկարագրել: Հայաստանի այն ժամանակուայ դրութիւնների հետ մեզ միայն Փաւստոսն է ծանօթացնում: Փաւստոսը իւր գործը գրելու ժամանակ լաւ աղբիւրներից է օգտուել: Այն ժամանակ գոյութիւն ունէր Թագաւորական արխիւն, որի վերատեսուչն ազգունի դրան քարտուղարն էր: Օր. նա այդ արխիւից է օգտուել, դէպի Կեսարիա օծման համար գնացող կաթողիկոսների նկարագրութիւնը գրելիս. նա մանրամասն յիշում է այն բոլոր իշխաններին իրանց անուններով, որոնք ուղեկցել են այդ կաթողիկոսներին: Նրա աշխատութիւնն ունի թերի և վատ կողմեր. օր. նա կրքոտ էնտուզիազմով է խօսում հոգևորականների մասին. և թշնամիների ու իշխանութիւնների ազատասիրութեան մէջ մեծ չափազանցութիւն է գործում: Այս բանը նա հայրենասիրական շահից դրդուած է անում: Օր. նա իզուր տեղից մեզ ուզում է համոզել, թէ Հայաստանը առաջ ծաղկած և ազգաբնակութեամբ լի մի երկիր է եղել, բայց թագաւորների և իշխանների անառաքինութիւնը յետոյ այդ երկիրը աւերացրել է: Ջաւանի և Արշակի մէջ կատարուած 34 ամեայ պատերազմների հետևանքն այն է լինում, որ Հայաստանը քայքայւում է և այդ երկրի զօրեղ իշխանները Պարսից կողմն են անցնում: Կասկածելի է թւում Ներսէս կաթողիկոսի և Վաղէնս կայսրի սինխրոնիզմը:

Ինչպէս երևում է, Փաւստոսը իւր աշխատութեան համար օգտուել է և ժողովրդական երգերից: Այդպիսի աղբիւրութիւն է թողնում հաւատարիմ Դրաստամատի և Արշակ թագաւորի մահուան մասին պատմածները: Ինչպէս երևում է Փաւստոսը Ջաւանի և Արշակի մէջ եղած պատերազմի և Վասակի տարած յաղթութիւնների նկարագրութիւնը վերցրել է Մամիկոնեանների պատուին ժողովրդի հեղինակած մի երգից:

Նոյնպէս նա Մուշեղի յաղթութեան նկարագրութիւնը ժողովրդական աղբիւրից է քաղել: Մի խօսքով հաւանական է, որ Փաւստոսի աշխատութեան համար պատմական նիւթ են մատակարարել Հայաստանի գրականագուրկ էպօխայում գտնուող Արշակունեաց և Մամիկոնեանց ցեղերի մասին եղած ժողովրդական երգերը, որպէս հռոմէական անալիստների ciarorum virorum laudationes-ը: Վաղէնս կայսրի պատճառած հալածանքների նկարագրութիւնը բոլորովին լեգենդական բնաւորութիւն ունի: Փաւստոս ժամանակագրի աշխատութիւնից օգտուողը շատ զգոյշ պէտք է լինի: Այդ աշխատութիւնը 4-րդ դարու Հայաստանի եկեղեցական և քաղաքական պատմութեան համար միակ աղբիւրն է: Իսկ միւս հայ պատմիչները, որոնք էլի այս շրջանի մասին խօսել են, նրանք բոլորովին արժէք չունին, կամ ունին շատ քիչ: Օր. Մովսէս Խորենացու աշխատութիւնը: Ցիւրիխի պրոֆեսոր Գելցէրը, ինչպէս Գութշմիդ և Կարրիէր, կարծում է, որ Խորենացին իւր աշխատութիւնը գրել է 7-րդ դարում, եթէ ոչ դեռ աւելի ուշ: Ուրեմն Խորենացին ես իւր նկարագրած դէպքերին ականատես չի եղել: Խորենացու հայոց եկեղեցական պատմութեան համար տուած ժամանակագրական սխեմը համեմատենք Փաւստոսի ներկայացրած ժամանակագրութեան հետ:

1. Փաւստոս.	2. Խորենացի.	
Գրիգոր	Գրիգոր	30 տարի
Արիստակէս	Արիստակէս	7 »
Վրթանէս	Վրթանէս	15 »
Յուսիկ	Յուսիկ	6 »
Փարէն	Փառներսեհ	4 »
Սահակ	—	
Ներսէս	Ներսէս	34 »
Յուսիկ	—	
—	Սահակ	3 »
Զաւէն	Զաւէն	4 »
Սահակ	—	
Ասպուրակէս	Ասպուրակէս	5 »

Խորենացու անունների և թուականների ցանկից օգտուել են համարեա հայոց բոլոր պատմիչներն ու ժամանակագիրները: Դրա համար նրանց ներկայացրած եկեղեցական պատմութիւնն արժէք չունի: Վերև բերած երկու ցանկերը քննենք Ներսէս Մեծից: Բոլոր ցանկերը (նոյնպէս և Միխայէլ Ասորին և Յոյնը) նրան 34 տարի են վերագրում, որ անկարելի է:

Ներսէսը թունաւորւում է Պապ թագաւորից (+374). բայց որովհետև Պապը Ներսէսի մահից յետոյ Հայաստանում հակաեկեղեցական բաներ է մտցնում, ուրեմն նա կարող է մեռած լինել կամ 373 թ. վերջում կամ 374 ի սկզբում: Ներսէսը ձեռնադրւում է Կեսարիայում Բարսեղ Մեծի նախորդ Եւսեբիոսից: Նա հովուեց 362—374 թ. ուրեմն Ներսէսը չէր կարող 362 թ. առաջ կաթողիկոս լինել: Սոկրատեսի եկեղեցական պատմութեան մի տեղեկութիւնը դրան համաձայն է (III, 25). Խորենացին Ներսէսին, որի հետ միայն Փաւստոսն էր ծանօթ, սխալեցնում է յետոյ յաջորդող Սահակ Քաջի հետ. դրա համար վերջինիս Աղբիանոսի յաջորդն է համարում: Յետոյ Խորենացին երկրորդ հատակում վախճանուած Յուսիկ I-ից *) մինչև սրա թոռն Ներսէսի աթոռը բարձրանալը Փառներսեհի 4 տարուայ կաթողիկոսութիւնն է առաջ բերում, որ շատ անհաւանական է: Փաւստոսը Ներսէսից յետոյ մի երկրորդ Յուսիկ է առաջ բերում իբրև կաթողիկոս, որին Խորենացին և սրա հետևողները մոռացութեան են տալիս: Փաւստոսի ասածը հաստատում է Մար Միխայէլ պատ. «Հոգևորականութիւն» վերնագրով իւր գրուածքում, որի կարծիքով Տէր Յուսիկը Ներսէսից յետոյ 4 տարի կաթողիկոսութիւն է արել: Կաթողիկոսների ժամանակագրութիւն կազմելը դժուար է, որովհետև Փաւստոսը տեղեկութիւն չէ տալիս, իսկ Մովսէսի բերած թուականները սխալ են: Միայն հաստատ են՝ 1) որ Արիստակէսը 325 թ. է կաթողիկոս դարձել, որովհետև նա Նիկիայի հայրերի հետ էր, 2) Ներսէսը մեռնում է 374 թ. առաջ և 3) Սահակ Մեծը մեռնում է Նաւասարդի 30 ին Յազկերտ Բ.-ի թագաւորութեան երկրորդ տարին, այսինքն 439 թ.: Մի խօսքով եկեղեցական պատմութեան համար Խորենացին արժէք չունի: Հայոց հին եկեղեցական պատմութեան համար Զենոբ Գլակի «Տարօնի պատմութիւնը» մեծ նշանակութիւն կունենար, եթէ կեղծ աշխատութիւն չլինէր: Արդէն ապացուցել են, որ Գլակի աշխատութիւնը VIII կամ IX-րդ դարու լեգենդական մի աշխատութիւն է, որ պատմական արժէք չունի: Ուսուցչապետ Գելցէրը նոյնպէս այդ աշխատութեան պատմական քննութեամբ եկել է միևնոյն համոզմանը: Ուրեմն վերև ասածից երևում է, որ Հայոց հին եկեղեցական պատմութեան ուսումնասիրութեան համար Ագաթանգեղոսի «Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքը» և Փաւստոսի պատմական գործը մեծ արժէք ունին:

Հայկական եկեղեցին փառաւորում է, որ իւրեն հիմնարկողը ոչ թէ մահկանացու մարդիկ կամ առաքեալներն են եղել, այլ ինքը Քրիստոսը: Այս բանը երևում է Լուսաւորչի Վաղարշապատի ժողովրդին պատմած երազից: Այդպիսով հին թագաւորանիստ Վաղարշապատը Հայաստանի հոգևոր մայրաքաղաքն էլ է: Լուսաւորչի մահից յետոյ զանազան խառնակութիւնների պատճառով կաթողիկոսական աթոռը դէպի ուրիշ քաղաքներ է թափառում և 1441 թ. վերջնականապէս էլի Վաղարշապատում կամ Էջմիածնում հաստատւում: Վաղարշապատը 4-րդ դարում Հայաստանի հոգևոր մայրաքաղաքը չէր, այլ Տարօնի Աշտիշատը: Այս քաղաքի սրբութիւնը մայր եկեղեցին էր և միևնոյն ժամանակ Հայաստանի հոգևոր Միտրոպոլիան էր, իսկ այդ ժամանակ Վաղարշապատը պրոֆան բնաւորութիւն ունէր դեռ ևս: Լուսաւորիչն Աշտիշատում գտնուող Վահագնի, Անահիտի և Աստղիկի պատուին կառուցած մեհեանները կործանել տալով այդտեղ հիմնեց քրիստոնէական առաջին եկեղեցին և այդպիսով Աշտիշատը Հայաստանի սուրբ կենդրոնը դարձրեց: Այս բանը հաստատում է Փաւստոսը:

Լեոն Բարայեան:

Ենա: (Կը շարունակուի)

*) Խորենացին ասում է, որ Տիրանը ուզում էր Յուսիկին սպանել տալ, որովհետև նա Յուլիանոսի մի պատկերը արհամարհեց: Ոչ Յուսիկը և ոչ էլ Տիրանը Յուլիանոսի ժամանակակից մարդիկ են. ուրեմն այստեղ էլ Խորենացու ժամանակագրութիւնը սխալ է:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Օգոստոսի 12-ից.

ՍՕՖԻԱ, («Բէյտէր»).—Երէկ, Ձիպկայի պատերազմի տարելիցի առիթով պատարագ և հոգեհանգիստ կատարուեց, որ ներկայ էին այդ կռուին մասնակցող բուլղարական նախկին պահեստի զինուորները, Կոբուրգի իշխանը և նախարարները:

ՍՕՖԻԱ, («Բէյտէր»).—Բազմաթիւ մանաւոր տներում, ուր մակեդոնացի են բնակւում, խուզարկութիւն եղան: Ինչպէս ասում են ոստիկանութիւնը որոնում է այն ուժանակները, որ թուական քանակութեամբ յափշտակուած է բուլղարական երկաթուղու կառուցման ժամանակ: Այդ ուժանակները դեռ գտնուած չեն:

ԼՕՆԴՕՆ, («Բէյտէր»). — Ջանխայից հեռագրում են, թէ պաշտօնից արձակուած փոխարքայ Լիուն, որին մեղադրում են միսիօնէրներին կոտորել տալու մէջ, նշանակուած է գլխաւոր կօմիսար՝ այդ գործի վերաբերեալ քննութիւն կատարելու համար: Լիուի այդ նշանակումն օտարազգի գաղութների մէջ վրդովմունք է յարուցել:

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական, սիֆիլիսի և վներական հիւանդութիւնների:

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կոծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մարթի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ քիմի-խուզարկական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ:

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.

ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիեւսկի փողոց № 14.

Իւր բացակայութեան պատճառով ամառս հիւանդներին կ'ընդունէ դօկտօր Սամուէլ Տէր-Պարոնեանցը նշանակեալ ժամերին:

Բացի գեղերից գործածւում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԷԼԷԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական միջոցներ:

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունւում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը	կիննարմատներ և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան	տղամարդիկ

Ընդունարանում գտնւում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասնագէտ անողկին և մասաժիստ պարոն:

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին:

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին:

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղարկւում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղարկւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան:

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղարկւում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղարկւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ-ԲԺԻՇԿ

Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 9—11 ժ. և երեկոյեան 5—7-ը: Գոլովինսկի Պրոսպեկտ, տուն Ակոպովի:

ԹԱՒՐԻԶԻ Բարեգործական «Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան» օրիորդաց դպրոցում (մանկական պարտէզ և նրան կից արհեստանոց) հարկաւոր է մի վարժուհի, որ մանկական պարտէզը վարէ և կար ու ձև սովորեցնի. եթէ վարժուհին ուսուցիչ ամուսին կամ եղբայր ունենայ, նա ևս կարող է տեղ ունենալ: Ցանկացողները պայմանների մասին թող դիմեն Եղբ. Կաֆիանների վաճառատունը (Երևանեան հրապարակ, Փոխադարձ վարկի ընկերութեան ներքև): (2—1)

ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

ՊԱՆՍԻՕՆԸ

տեղափոխուեց Թիֆլիզի տղայոց 3-րդ գիմնազիայի պանսիօնի նախկին բնակարանը:

Сололаки, Гудовича ул. домъ Корганова № 8: (3—2)

Կորցրած ստացուածի հետևեալներն են. առաջին խաղարկութեան 07701/26, երկրորդ 11482/8, գտնողները կստանան հարիւր ռուբլի վարձատրութիւն:

Հասցէն՝ Эривань, Александру Акопянцъ. (3—2)

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ Է 23.000.000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տեղաւորած թղթերը պահւում են պետակ. բանկում:

Ծնողներին, խնամատարներին և առ հասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «ՌՕՍՍԻԱ» ընկերութիւնը առաջարկում է օժիտի (բաժինք) ապահովագրութիւնը:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամսեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ռուբլի օժիտ, այնպէս որ, 18 տարեկան ժամանակին ստանան այդ գումարը (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «ՌՕՍՍԻԱ» ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 ռուբլի:

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձուին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները), եթէ միայն ապահովագրուած երեխան վախճանուի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 31,701 անձինք 83,708,760 ռուբլի դրամագլխով:

Տղայ երեխաների համար ես կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացուի իբրև թոշակ (պէնսիա) կրթութիւնը շարունակելու համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունւում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնւում է՝

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում: 52—24

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ԿՐԿԻՆ ԿԸՍԿՍՈՒԻ

ԿԱՐՈՒՁԵՒԻ և ՁԵՌԱԳՈՐԾԻ

ՈՒՍՈՒՄՆ

Ուսումնարանը կը գտնուի Երևանեան հրապարակի և Միջին-փողոցի անկիւն, տուն Իշխան Արղութեանի, վերին յարկում: Նոյն տեղը շաբաթը մէկ անգամ էլ կը տրուի ՊԱՐԻ (տանցաւորի) դասեր: Ցանկացողները կարող են այժմեանից պայմանաւորուել: Կրնդունուին և գիշերօթիկներ:

(Վեր.) (5—3)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առևտրական և գործարն. հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆՆԵՐՆ ԵՆ

ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուատեսութեան:

բ) Առևտրական թուաբանութիւն:

գ) Առևտրական նամակագրութիւն:

դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղութիւն:

Պարապմունքներն սկսուելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Ֆրէյլինեան փողոց, տուն Սուլխանովի, № 13.

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախւում է Թիֆլիզում, Խիդդեկէլի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: Գինն է 3 ռ. 50 կոպ.:

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու. (15—1))

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ

	Ռ. Կ.
Նախագիտելիք թուաբանութեան, Ա. Քէշմիշեանի Տ. 1895 թ.	— 80
Տանջանքի բովից, վէպ իրական կեանքից Բ. Այվազեանի Տ. 1895 թ.	— 30
Ուսկոլներ Եժի վէպը. Պետերբուրգի հայ ուսանողների հրատարակութիւն Պ. 1895 թ.	— 35
Հիպոտիզմ, մ. երկ. բնական հիպոտիզմ. թրգ. Վ. Արծրունիի, Տ. 1895 թ.	— 15
Երկու եղբայր, վէպիկ Տիկ. Մօնդօմիրիի թարգ. Պ. Պ. Տ. 1895 թ.	— 60
Խճորեններ երկրում, (Ույդի հէքեաթներից) Տ. 1895 թ.	— 10

5—2

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ դպրոցում նորեկ աշակերտների ընդունելութիւնն սկսուելու է օգոստոս ամսի 20-ից:

(3—2 կ.) Հոգաբարձու Կ. Քոչարեանց:

ԷԴԻՍԻՈՅ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է մի վարկ ունեցող ուսուցիչ հայոց լեզուի, շաբաթական պիտի աւանդէ 24 դաս, բոլոր բաժանմունքներում, հայոց լեզու, թուաբանութիւն և հայոց վայելչագրութիւն: Տարեկան վարձ 400 ռ., տրւում է սենեակ, ծառայ և վառելիք, միևնոյն ժամանակ յայտնեն, թէ որտեղ են աւարտել իրանց ուսումը:

Ցանկացողները թող դիմեն ինձ հետևեալ հասցէով. Черезъ городъ Моздокъ, въ М. Эдиссіи предсѣдателю попечительства Эдисс. Арм. Дух. Учил. Свящ. Теръ-Карапету Власянцъ. (3—3)

ԲԱՑՈՒԱԾ Է

„ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ և ՊԱՏՄԱԿԱՆ“

ժողովածուի

VII և VIII գրքերի բաժանորդագրութիւնը:

Երկու գիրքը ամփոփուած կը լինի մի հատորում և բաղկացած մինչև 600 երեսից: Ի միջի այլոց նշանաւոր տեղ կը բռնէ հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանի ընդարձակ կենսագրութիւնը: Գիրքը լոյս կը տեսնէ առաջիկայ նոյեմբերին: Բաժանորդագինն է 3 ռուբ., տպագրութիւնից յետոյ—4 ռուբ.: Ցանկացողները դիմում են հետևեալ հասցէով. Москва, Мясниая, д. Ермакова.

(3-2) Հրատարակիչ՝ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ:

Дозволено цензурою, Тифлисъ 12-го Августа 1895 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и Ко На Михайловской ул., № 81.